

Հ. Յ. Գ.  
ՄԱՍԼՈՅ ԴԻՐԱՆ

# ԴՐՈՇԱԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՅՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

1903

„Droschak”  
ORGANE  
de la Fédération  
Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԿԿ

Adresse :  
RÉDACTION DU JOURNAL  
„Droschak”  
GENÈVE (Suisse)

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՍԿԱՆ ԴԱՁՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Հ. Գ. ԲԻՐՈՅԵ  
Պ. Բ. ԲՈՒՐՈՅԵ  
A. R. F. BUREAU  
LIBRARY

### Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Պարսկաստանում ստացված մի նամակից մեզ հետազոտում են հետևեալ կտորը.

„Դաշնակցութեան” ղինակիր խմբերը, հետևակ և ձիաուոր, մծտ հարիւր հոգի, մի քանի մասերի բաժանւած, սեպտեմբերի 17-ին (Տ. ա.) յաջողութեամբ անցան ուղևորական սահմանը: Հետևեալ օրը, ճանապարհին, սահմանից 6-8 վերստ հեռու, խմբերից երկուսը նկատուում են հովիւներից և շուտով շրջապատուում են զօրքերով, թուրք խուժանով և քուրդ աշիրաթներով: Սկզբում է ստակալի կռիւ, որը ահա երրորդ օրն է դեռ շարունակուում է: Կանչւած են զօրքեր Կարինից, Գալիբաբայից և Ղարաբաղից: Երբեք են նաև թնդանոթներ, Մեր ընկերները կուում են քաջաբար: Թշնամուց ընկել են հարիւրաւոր մարդիկ, որոնց թուում մի հազարապետ, մի գայմագամ, երեք սպայ, հինգ դարաբաշի (դարաբէյ) և սահմանագլխի յայտնի Ռաշիտ փաշայի մեծ որդին: Խլել են զօրքերից բազմաթիւ հրացաններ և ձիաներ: Գժբաղդաբար՝ անհաւասար կուում մասմաս եղած խմբերը իրենք ևս տւել են բազմաթիւ նահատակներ և գտնուում են ամենակրիտիքական դրութեան մէջ: Նոր խմբեր գնացին օգնութեան: Մանրամասները նամակով:

### „ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ”

Բռնակալութիւնը ևս „պատճառաբանում է”, նա, որ իր էութեամբ թշնամի ու հակառակորդ է ամէն տրամաբանութեան: Անցել են ժամանակները, երբ նա, իբր աստուածընտիր ու անմեղանչական մի հաստատութիւն, առանց հաշիւ տալու, յախուռն ու ցասկոտ՝ զարնում էր աջ ու ձախ և իր գործողութիւնների մէջ մ է կ ղեկավարող պատճառ էր ճանաչում— պ ե տ ա կ ա ն պ ա տ ճ ա ու ը : Այժմ ևս նա չի փոխել իր ներքին բնոյթը— դարձեալ մոլեգնոտ ու ամբարտաւան, դարձեալ Փանատիկոս իր ըմբռնումների մէջ՝ նա շարունակում է հարւածներ տեղալ, բայց նրա ամէն մի քայլը „պատճառաբանւած է”... Փոխել է ձևը, փոխել են գործելու եղանակները: Պէտք է գէթ „փրկել երևոյթները”, պէտք է որոշ հարկ տալ

տրամաբանութեան ու արտաքին աշխարհի հանրային կարծիքին: Պէտք է սքողել մարդկայնութեան դէմ գործող ոճիրները և ապացուցանել — միամիտներին ու անմիտներին— որ արքայական հրամանների մէջ չկայ քմահաճոյք, չկայ բռնութիւն, որ ամենասե արարքներն անգամ պայմանաւորուում են „հասարակական ընդհանուր բարօրութեան նկատումներով”...

Այդպէս էին խորհում 1898-ին Պետերբուրգի դիւանատան մէջ Մետերնիխների „քաղաքակրթւած” յաջորդները, որոնք սեղանի շուրջը բոլորած, խելք խելքի տւած՝ դաւ էին նիւթում մի փոքրիկ, հալածական ժողովրդի դէմ: „Հայ հոգևորականութիւնը ունի քաղաքական օրինազանց գործունէութիւն”:

„Հայ եկեղեցին ունի չարագանց ինքնավար սիստէմ”:  
„Եկեղեցական-վանական գոյքերի կառավարութեան մէջ չը կայ կարգ-կանոն, հայ հոգևորականութիւնը անփորձ ու վնասակար ձևով է օգտուում իրեն պատկանող հողերից” \*):

Հինձու պատրւակներ, անլուր ցինիլմ, թունաւոր ծաղը...

Եւ քսաներորդ դարի Մակիավէլները հրամանագրեցին՝ կարճել հայ կղերի „օրինազանց” գործունէութիւնը. Սահմանափակել հայ եկեղեցու ինքնավարութիւնը. „կարգ-կանոն” մտցնել կալւածների կառավարութեան մէջ:

Որքան դիւրին է պատրւակներ ստեղծել, երբ նրանք չկան: Ով քիչ-շատ ծանօթ է իրականութեան, գիտէ, թէ որպիսի չարամիտ կատակ է հայ կղերի „օրինազանցութեան” և նման առասպելների մասին խօսելը: Երանի չէր թէ այդպէս լինէր... Բայց նոյնիսկ իրենց, հայ ազգի դահիճներին, շատ քաջ յայտնի է, որ ամէն բան կայ այդ կղերի գործունէութեան մէջ, բացի ըմբոստուութիւնից, օրինազանցութիւնից: Գիտեն ամէնքը, որ նա սկզբից—մանաւանդ 1890 թւականից իվեր— իր գլխին տեղացող բոլոր հարւածներին փոխանակ հակազդելու՝ որ իր սրբազան պարտքն ու իրաւունքն էր՝ միշտ ձկել է իր պարանոցը, միշտ համակերպել է ճշմարիտ կղերական ստրկամտութեամբ: Նա տեսնում էր տարիների ընթացքում, թէ ինչպէս իր կենտրոն-սրբապալարի մծտ, Ելմիածնի շուրջը, միշտ աւելի և աւելի խոր արմատ է ձգում դաւանափոխութեան թունաւոր միկրօքը, նա տեսնում էր չինօփիկ պօպերի,

\*) Տես „Իրօշակ” № 7:

նահանգապետ-միաօնարների շահատակութիւններն ու ռուսացման յարաճուն վտանգը, — և նա չէր փորձում, նա քաղաքացիական արիութիւն չունէր միանգամ դուրս գալ պաղ ակնատեսի դաւաճան գերից...

Աւելի ևս: Ո՞ւր համար արդեօք գաղտնիք է այսօր կղերի բռնած անարժան դիրքը մեր արեան ու արցունքի վերջին տասնամեակում, երբ հայ-ազատագրական կռիւլը բորբոքելով սահմանից միւս կողմը՝ բոցավառել էր հայ երիտասարդութիւնը սահմանից ասդին: Գիտեն ամէնքը, որ մեր հոգեկորականութիւնը իր ընդհանրութեամբ — բացառութիւնները օտոյններն են անապատի մէջ — կուրի ու տաքնապի այդ տխուր օրերում, ունենալով միջոցներ ու հեղինակութիւն, երբէք չէ փորձել օգնութեան հասնել, գէթ խրախուսել, գէթ ոգևորել ազատութեան համար մարտնչող տարրերին, այլ կղզիացած իր վեհապանծ մեկուսացման մէջ՝ արծարծել է միշտ անարգ հնազանդութեան փիլիսոփայութիւնը, ձգտել է պաղեցնել կուռղ ժողովրդին, ձգտել է մարել բորբոքող կրակը և անգիտակից սատար է կանգնել իր հօտը յօշոտող բռնաւորներին: Կանն է, դանն իրողութիւնը...

Այդ ողբալի պարտազանցութիւնն է արդեօք՝ ազգի ամենածանր ու արհաւիրից վայրկեանների մէջ՝ որ մեր թշնամիները հուշակում են իբրև «օրինազանցութիւն»...

Ապա մեզ ասում են.  
 «Եկեղեցական գոյքերի կառավարութեան մէջ կարգ-կանոն չկայ, պէտք է սահմանել... պէտք է հարստացնել հայոց եկեղեցին»...

Որպիտի սրտացաւ մտահոգութիւն... Բայց մենք ուրիշ առիթներով ճաշակել ենք աղբէն աքթայական այդ վեհանձն մտահոգութեան պտուղները: Երբ ռուս բիւրօ-կրատիան իր մծնբօլական հաստ շրթունքներով փչում, մարում էր մեր խաւար մթնոլորտում պլպլացող լոյսը — ազգային դպրոցները, այն ժամանակ ևս խաւարի երգեհալ ռահվիրաները խոստանում էին մեզ «կարգ-կանոն» մտցնել մեր դպրոցական «անկարգ» վիճակում...

Կսկիծ է բռնում ձեզ, երբ համեմատում էք դպրոցների նախկին վիճակը այժմեանի հետ: Ո՞ւր է մեր դըպրոցներում տիրող կեանքն ու աշխօյժ՝ կապուած ժամանակակից ճշմարիտ ուսման ու բարոյական կրթութեան հետ: Ո՞ւր է հայ ժողովրդի, հայ հասարակութեան մշտնջենական վերահսկումը, որի շնորհիւ միշտ հրաւիրւում էին ձեռնհաս ուժեր դպրոցների համար և հարստացում էին վատերն ու ագէտները, ինտրիգաններն ու կարիէրիսանները: Ո՞ւր է ռուսացական խմբերի անկախութիւնը, որից օգտւելով՝ նրանք ազատօրէն ծրագիրներ էին մըշակում, ձեռնարկներ էին ընտրում, արծարծում էին մանկավարժական ամեն կարգի խնդիրներ և ըն, և ըն...

Գրանց փոխարէն հայկական աշխարհում հաստատել են և պիտի բազմացնեն «պետական-ժողովրդական», կամ բուն ռուսական տիպի դպրոցներ, տեղ-տեղ «հայ ծխական դպրոցների» անւան տակ, ուր հայ եկեղեցու փողերով

վարձատրւող ռուս ու վրացի ռուսացիները արգելում են հայ մանուկներին խօսել հայերէն, ուր ռուս, թուրք, վրացի ընդունւում են աւելի գրկաբաց, քան դըպրոցների գոյութիւնը պահպանող հայի զաւակները: Գրանք դպրոցներ չեն, այլ բթացնող ու ապականող կաղարամաներ, ուսկից վտարւած են մայրենի լեզու հետ՝ ճշմարիտ ուսումնի ու կրթութիւնը, ուր ռուսացիները տրւում են ի վերուստ և այն՝ ամենատխուր կարգի անհատներից, որոնք պիտուութեան հետ միասին՝ բերում են երեքամեայ դասընթացք միայն ունեցող ռուսական սեմինարիաներից՝ ուլտրա-միապետական, լըտեսական և դրանց նման առաքինութիւններ, — այդ ժանդարմները՝ չինօվնիկական կոկարդներով՝ մի մի դահիճներ են հայ սերունդների համար, որոնց ուրիշ բան չեն սովորեցնում, բայց եթէ մեքենայացնող վայելագորութիւն ու գծագրութիւն, բայց եթէ անվերջ աղօթել ու յարստամ երգել՝ «Բօժէ ցարիա խրանի»...

Ահա այդ տեսակ դպրոցների են վերածել արգէն առաջին յափշտակման օրից մեր դպրոցների մի մասը: Այժմ էլ՝ ռուսացման քաղաքականութիւնը կովկասում լայնօրէն առաջ մղելու համար՝ բռնակալութիւնը, խնայելով պետական դատարկ գանձարանը, ուզում է հայ եկեղեցու փողերով, հայ ժողովրդի երկար դարերի քրտինք-վաստակով՝ պատել մեր երկիրը նոյն կարգի սպանիչ, բիւրօկրատիական մեքենաների ցանցով...

Ահա այդ եղանակով են ուզում «կարգ-կանոն» մտցնել մեր գոյքերի կառավարութեան մէջ... Ամեն տեղ երևում է կառավարելու այդ «շնորհալի» ձևը: Գեռ ևրէկ էր, որ պետական գոյքերը կառավարող չինօվնիկները միլիօններ էին ծախսում կովկասի մէջ՝ գիւղատնտեսական պէտքերի համար — և, ինչպէս պարզւեց... ապարդիւն: Միլիօնաւոր դեստիտուիւններ ամենաարգաւանդ հողերից՝ մնում են խոպան, անմշակ, որովհետև Պետերբուրգի անձար չինօվնիկները՝ նախաձեռնութիւն ու հմտութիւն չունեն՝ ոռոգելու և բնակեցնելու նրանց ընդունակ տարրերով: Ամբողջ նահանգների տարածութիւն ունեցող հարուստ անտառներ՝ տալիս են միայն ողորմելի արգիւնք, որովհետև կաշառակերութեան ակտը վարակել է բովանդակ Ռուսաստանը՝ սկսած անտառապահներից մինչև մինիստրները:

Այդպէս պիտի «կառավարեն» յափշտակած գոյքերը, այդպէս պիտի «հարստացնեն» հայոց եկեղեցին: Հրապուրիչ է հեռանկարը, ինչ ասել կուզէ...

Բայց այդ դեռ բոլորը չէ: Մինիստրական խորհրդի «պատճառաբանութեան» մէջ մի ծանր կէտ կայ, մի խորհրդաւոր կէտ, որ կապուած է ընթացող ուշադրութիւնը, որպէս բացայայտ սպառնալիք: Կա այն կէտն է, որ վերաբերում է հայ եկեղեցու «չափազանց ինքնավարութեան» և նրա կարճելուն: Խեղճ, անբախտ ժողովուրդ... Կոր հարւածներ են պատրաստուում բո գէմ, և աւելի ծանր, աւելի ահարկու: Պէ՛տէ ձիւաղը կատակ չէր անում, երբ բացատրում էր մինիստրական խորհրդի

առջև, թէ «առաջարկած ձեռնարկութիւնը ըստ ամենայնի համապատասխան է այն միջոցներին, որոնց ձեռներէց է եղել և դեռ և լինելու է ներքին գործոց միտարութիւնը՝ հայ եկեղեցու չափազանց ինքնավարութիւնը սահմանափակելու համար»: Նոյն սպառնալիքը շեշտած է և միտարարի վերջին հաղորդագրութեան մէջ՝ ուղղած հայոց կաթողիկոսին...

«Պօլօթեհիէ»-ն պիտի շարունակեն խախտել կրճատել մինչև որ իսպառ կ'ոչնչացուի հայ-կղերական ամէն իրաւունքը, մինչև որ Սինօդ, թեմական ու վիճակային կօնսիստորիաներ իսպառ կը կորցնեն իրենց նշանակութիւնը, մինչև որ բովանդակ հայ եկեղեցին կը դառնայ զուտ ռուսական մի հաստատութիւն, բիւրօկրատիայից կախումն ունեցող մի սոսկ մեքենայ...

Այո՛, դեռ նոր-նոր դաւեր են նիւթում միապետական ոճրանոցում:

Կիրաւորձիւն արդեօք...

Կը համարձակե՞ն ռուս կառավարութիւնը այս բո-

լոր անցած-դարձածից յետոյ՝ շուտով ու ամբողջ ծաւալով մէջ բերել իր ծրագիրները: Կը համարձակե՞ն հայ հոգևորականութիւնը, նրա այս կամ այն ներկայացուցիչը՝ ստրկօրէն համակերպել և ռուսական բիւրօկրատիայի փափուկ բարձի վրայ բազմելու ազգադաւ պաշտօնը ստանձնելը— այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան:

Յամենայն դէպս, այո՛ն կամ ոչ-ը մեծապէս կախած է հայ ժողովրդի այժմեան դիրքից, դիմադրութեան ծաւալից... «Ինքնապաշտպանութեան կօմիտէները» երևան գալը Անդրկովկասում՝ ինքն ըստ ինքեան կազդուրիչ փաստ է: Կռի, կորովի այն աստիճանը, որ ժողովուրդը, դիմադրող տարրերը ցոյց կը տան այժմ, երբէք չէ կարող անհետեանք մնալ և՛ մեր ազգային արժանապատուութիւնը բարձրացնելով հանդերձ՝ միշտ աւելի պատկառանք, աւելի երկիր ու շրջահայեցու-թիւն պիտի ներշնչէ նոյնիսկ այնպիսի խելագարներին, որպիսին են ռուսական ստոր ուժի մի ներկայ արժանաւոր ներկայացուցիչները:

## Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Յ Ո Յ Յ Ե Ր Կ Ո Վ Կ Ա Ս Ո Ւ Մ

Շարունակում ենք առաջ բերել հետզհետէ մեր խմբագրութեան մէջ ակնատես-թղթակիցներին ստացած նամակները, որոնք նկարագրում են անդրկովկասեան հայութեան տաղնապը:

### VII. Բ Ա Գ Ո Ւ

Այստեղ ցոյցը կազմակերպել է ամբօխը, ինքնաբերաբար: Սեպտեմբերի 2-ին, առաւօտեան ժամը 10-ին, լուր տարածեց, թէ նոյն օրն է լինելու գոյքերի գրաւումը: Անսպասելի էր: Ոչ ոք չէր կարծում, թէ այդքան շուտ պիտի կատարուէր, քանի որ Էջմիածնից նամակ կար, թէ ամսի երկուսին այնտեղ էր լինելու գրաւումը և ապա, հետզհետէ ուրիշ տեղերում:

Ընդը տարածեց ապշեցուցիչ արագութեամբ: Ժամը 5-ին բալխասնցիների մի սուար խումբ, որոնց մէջ շատերը զինւած էին, ինքնաբերաբար թափուց քաղաք ու լցրեց եկեղեցու գաւիթը և շրջակայ փողոցները: Երևացին կօլակներ ու սոսիկաններ: Նրանք հրաւիրեցին ամբօխին ցրելը Ատրճանակներով ու քարերով ամբօխը յետ մղեց ոստիկաններին. վերջիններս էլի երկու անգամ յարձակում գործեցին, բայց և ամէն անգամ յետ մղեցին: Այնուհետեւ եկաւ հետեակ զօրքը: Նա երկիրը զով էր մօտենում եկեղեցուն, կարծելով որ այնտեղ դիմա-միտ կայ պահած: Վերջապէս եկեղեցին պաշարում է:

Սկսում է երկու կողմից հրացանաձգութիւն, որը տևում է մի քանի ժամ: Գիշերայ ժամը 11-ին մօտ եկեղեցին դեռ լի է ժողովրդով, իսկ դուրսը կանգնած է զօրքը: Խորհրդաւոր ու մեղամողձիկ զօղանջում է եկեղեցու զանգը, որ օգնութեան է կանչում պաշար-ւածներին:

Կէս գիշերից յետոյ, երբ ուժը արդէն հաստատում է իր իրաւունքը և փողոցները դատարկում են ամբօ-խից, սուխները սկսում են մօտենալ եկեղեցուն, աւելի նեղացնել շրջանը: Պաշարւածների փամփուռները ըս-

պառւում են. նրանց մի մասը՝ պատուհաններից մի կերպ դուրս գալով, ազատում է: Մնացածներին — մօտ 100 հոգի — թողնելով կապտում են իրար ձեռքերից և զինւորների մի սուար խմբի հսկողութեան տակ ուղարկում են բանտ: Եկեղեցու գաւիթը այդպիսով մաքրում է և զօրքը բռնում է պաշարւածների տեղը: Սկսում են խուզարկել եկեղեցին...

Այդ արիւնահեղ ընդհարման միջոցին հայերից սպանւում են 11 և վիրաւորւում 45 հոգի:

Ահա Բագում նահատակւած և ծանր վիրաւորւած-ների անմոռանալի անունները.

- ՍԱՐԳԻՍ ԱՓՐԻԿԵԱՆՑ
- ՔԵՐՈՎՐ ՍՏԵՓԱՆԵԱՆՑ
- ՊԵՏՐՈՍ ՍԱՖԵԱՆՑ
- ԱՐՃԱԿ ԴԱԲԵՂԵԱՆՑ
- ՆԻԿՈՂԱՅՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
- ՅԱՐՈՒԹԻԻՆ ՅԱՎՈՎԲԵԱՆՑ
- ՀԱՅՐԱՊԵՏ ՍԱՐԳԻՍԵԱՆՑ
- ՍԱՐՏԻՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (Շուշեցի)
- ՍԱՐՏԻՐՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ (Կօնդուկաօր)

Երկուսի անունները անյայտ են դեռ: Ծանր վիրաւորւածներ, որոնց առողջանալուն յոյս չկայ.

- ՅՈՎՀԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ
- ԽՈՍՐՈՎ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ
- ԱՂԵՔՍԱՆԴՐ ԳԱԲԵԱՆՑ
- ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՑ
- ԱՂԵՔՍԱՆԴՐ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆՑ

Թեթև վիրաւորւածների թիւն է 40: Թշնամու կողմից նոյնպէս կան շատ սպանւած և վիրաւորւածներ:

Հետևեալ օրերը — սեպտեմբեր 3-ին, 4-ին, 5-ին — եկեղեցու առջև խոսեալ են զինւորները. նրանց հրահանները բուրբեր են կազմում՝ դարբասի ներսը, պատերի երկարութեամբ: Պարագետը բանակի տեսք ունի. այնտեղ վրաններ են ձգած, կերակուր են պատրաստուած: Երևում է և մի թնդանօթ: Երթեկեղութիւնը այդ փողոցով դադարած է: Բռնում են տմէն մի անցորդի, խուզարկում են և եթէ մի գրչահատ էլ գրտնեն գրպանուած, ծեծում, բանտարկում են:

Չինւորական դրութիւն է Բաղուում...

VIII: Կ Ա Ր Ս

Կառավարութիւնը այստեղ էլ ցոյց տւեց, որ ոչ մի միջոց չպիտի խնայէ՝ ճշելու ամէն մի արդարացի բողոք հայ ժողովուրդի կողմից և որ միշտ պատրաստ է սրի ու հրացանի առնել այդ ժողովուրդին: Նա համոզւած էր, որ Գանձակի կոտորածներից յետոյ ոչ մի հայ այլևս չպիտի համարձակէր ոչ միայն դուրս գալ հրապարակով բողոքելու բռնակալութեան դէմ, այլ նոյնիսկ կը վախենար մտածել դրա մասին: Այդ պատճառով էլ նենգամիտ Գալիցիներ, որ խստիւ պատուիրել էր Երևանի և Ալէքսանդրապոլի ցոյցերի մասին ոչ մի լուր չտպել լրագիրներում, յանկարծ հրամայում է Գանձակի կոտորածի մասին շուտափոյթ տեղեկութիւն տալ պաշտօնական «Կազկազ» լրագրում, որպէս զի սարսափեցնէ հայ ժողովուրդին: Բայց իզո՞ւր...

Օգոստոսի 24-ի խաղաղ ցոյցից յետոյ \*), Կարսի հայ ժողովուրդը սեպտեմբերի 2-ին արդէն ապացուցեց, որ նա չէ վախենում նաև կողակների և սալաթների սրերից ու գնդակներից, և համարձակ կերպով արտայայտեց իր արդարացի բողոքը ոռու կառավարութեան աւազակային յափշտակութեան դէմ:

Այդ օրը, վաղ առաւօտեան, քաղաքի մէջ տիրում էր խորհրդաւոր վուժիւն: Ժամի 10-ին կառավարչական Յանձնաժողովը՝ շրջապատւած բազմաթիւ ստրաժնիկներով, ներկայանում է վարդապետին, պահանջում է նրանից կալածների և փոյթերի ցուցակներն ու դօկումենտները: Վարդապետը կտրուկ կերպով մերժում է: Եւ ահա սկսում է գանգահարութիւն. հայերը թողնում են գործերը, փակում են խանութները և շտապում հոգևոր կառավարութեան շուրջը: Այգտեղից ժողովուրդը աղաղակով վազում է դէպի եկեղեցիները: Փողոցներում բազմութիւնը աւելի ու աւելի մեծանում է և հասնում մօտ 4-5 հազար հոգու: Այդ յանկարծահաս, բայց ուժգին բողոքը շփոթեցնում է տեղական ամբողջ վարչութիւնը: Նա իսկոյն քաղաք է թափում երկու գունդ կողակներ և ահապին թուով ստրաժնիկներ: Երբ Յանձնաժողովը շարժւում է դէպի հայոց եկեղեցին, ամբոխը քարէ կարկուտ է թափում: Ստրաժնիկներն ու կողակները նահանգապետի հրամանով երկու անգամ պարպում են հրացանները: Ժողովուրդը պատասխանում է ռեվոլվերներով ու քարերով: Այդ անհաւասար կռիւն թաց քում հայերից զոհ են գնում 4 հոգի, շատերն էլ վիրաւորուած են: Իսկ բռնակալութեան կոյր գործակալներից՝ մի քանի ստրաժնիկներ ծանր վէրքեր են ստանում, նահանգապետը և մի քանի շինօնիկներ՝ քարի

\*) Տես «Դրօշակ» № 7

հարածներ: Ժողովուրդը իր պարտքը կատարելով՝ կամաց կամաց սկսում է ցրուել: Սակայն ոստիկանութիւնը դրանից յետոյ էլ շարունակում է հայածել անպէն ու անպաշտպան մարդկանց և բանտը լցնում է 85 ձերբակալածներով:

IX: Է Ջ Մ Ի Ա Ս Ի Ն

Սեպտեմբերի 5-ին Երևանից Էջմիածին եկաւ կառավարչական Յանձնաժողովը՝ բաղկացած հետևեալ անձերից. — Երևանի փոխնահանգապետը, մի հայատեաց վրացի, որ հայակերութեան բազմաթիւ ապացոյցներ է տւել, նահանգապետի դիւանատան կառավարիչը, նահանգական ատեանում ծառայող մի հայ — Լեւոն Ջալալեան, Վաղարշապատի գաւառապետը և Սինօրի պրօկուրօր Կանչելին: Աւելացնեմ, որ Երևանի փոխնահանգապետը սեպտեմբերի 4-ին վերադարձաւ Թիֆլիսից, ուր գնացել էր հրահանգ ստանալու այս բողոք եղևնագործութիւնների հեղինակ Գալիցիներից: Սեպտեմբերի 5-ին, առաւօտեան ժամը 11-ին, Յանձնաժողովը ներկայացաւ կաթողիկոսին և խնդրեց յանձնել եկեղեցական կալածները համաձայն բարձրագոյն հրամանին:

Կաթողիկոսը մերժեց յանձնել ուէ բան, մօտաւորապէս հետևեալ խօսքերով. «Նա երգել էմ ուսուց կայսեր՝ հաւատարիմ լինել նրա հրամանին և պատրաստ եմ ամէն ըրպէ նրա հրամանը կատարել. եթէ պէտք լինի, ես պատրաստ եմ խաչը ձեռքս առնել և իմ ժողովուրդին առաջնորդել կայսեր թշնամիների դէմ՝ կուով ու արհնով ապացուցանելու մեր ամենախոնարհ հպատակութիւնը. բայց միևնոյն ժամանակ երգում եմ տւել նաև իմ ազգին, թուով 4 միլիօն հայ, երգել եմ հաւատարիմ լինել նրան և նրա դարևոր իրաւունքների պաշտպանը հանդիսանալ: Հայ ազգը, միլիօնաւոր ստորագրութիւններով, դիմել է ինձ, խնդրում է միջնորդել կայսեր և նրա ողորմածութիւնն ստանալ: Ես արդէն դիմել եմ, բողոքել և սպասում եմ կայսեր շնորհին»:

Յանձնաժողովն այն դիմումին, թէ «մեր կայսեր ծառաներն ենք, պարտաւոր ենք անյապաղ կատարել նրա հրամանը, թելադրեցէք ձեր ստորագրեալներին դիւրութիւն տալ մեզ իկատարածելու բարձրագոյն հրամանը», հայրիկը պատասխանեց է. «Եւմ կարող ոչինչ անել Խնչ էք ուզում ինձանից. մի հոգի ունեմ, կուզէք առէք, մնացածը բոլորը ժողովուրդինն է: Ես ոչինչ չեմ տայ և ոչ էլ թղթերը կըստորագրեմ: Գուք պրօկուրօր ունիք, դիմեցէք նրան»: Տասը ըրպէ այդպէս խօսելուց և կաթողիկոսից բացասական պատասխան ստանալուց յետոյ, Յանձնաժողովը հեռացել է վեհարանից առանց ոչինչ անելու: Այդ օրը ես ներկայ էի Վաղարշապատում: Ամբողջ գիւղը կարծես ամայացած լինէր. սգի օր էր: Բոլոր խանութները, արհեստանոցները և գլխաւոր փողոցի վրայ գտնուած տները փակւած էին: Փողոցներում մի հատիկ հայ չէր երևում: Բողոքը քաշւել էին տները: Փողոցում թագաւորողը կառավարութեան պաշտօնեաներն էին, պաշտօնական-տօնական համազգեստներով — զօրքեր, օֆիցէրներ, ոստիկանութիւն — գազանների մի խառնիճաղանձ վոհմակ, որոնք սրարշաւ դէս ու դէն էին չափշփում:

Այժմ Էջմիածնում կայ 800-900 հետևակ զինւորներ, 200 կողակներ, 80-ի չափ բատարէա-թնդանօթներ, ահապին քանակութեամբ ստրաժնիկներ և ոստիկաններ

արտաքոյ կարգի քանակութիւն: Վանքը շրջապատել են չորս կողմից զինւորներով. իսկ կօզակներն ու ստրաժ-նիկները շրջագայում են գիւղի փողոցները և ճանապարհները՝ դէպի գիւղերը և դէպի Երևան:

Էջմիածնում անաջողութեան հանդիպելով՝ ուղևորել են ՕՇԱԿԱՆ 105 զինւորներով, 200 կօզակներով և 70 ստրաժնիկներով: Զինւորներին մէկ օր առաջ ուղարկել են Աշտարակ, կօզակներին՝ Օշական, իսկ ստրաժնիկներին պահել են իրենց հետ: Օշականում, Յանձնաժողովին նախաբան ձևից դիմում է հայ ժողովուրդին և բաւական մեղմ լեզուով առաջարկում է ստորագրել ժողովուրդը մերժում է: Առարկութիւնը ամէն տեղ միւսնայն է — իրենք չեն կարող առանց կաթողիկոսի հրահանգի՝ ունէ մասնակցութիւն ունենալ: Արդ Վրաց վրդոված՝ դիմում է Օշականի երեսփոխին արդէն պահանջով: Բայց նրանից էլ մերժում է սասնում: Գաւառապետը սպառնում է, մինչև իսկ մի երկու ապտակ է տալիս — դարձեալ նոյն պատասխանը: Ճարները կտրած՝ երեսփոխին բանտարկում են և իրենք գնում ԱՇՏԱՐԱԿ: Այնտեղ Յանձնաժողովը դիմում է դիւղական տանուտէրին: Սա ևս մերժում է ու գաւառապետը սրան էլ ծեծել է տալիս և պահանջում է ստորագրել, բայց տանուտէրը փոխանակ ստորագրելու, վրէժը կախ արած տանուտէրական նշանը հանում է և հրաժարուում: Անցնում են ԵՂԻՍԵՅ գիւղը, որտեղից եկած լուրը վկայում է, որ ժողովուրդը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցել: Ստորագրել է միայնակ գիւղական տանուտէրը: ՄԱՍՏԱՐԱՅ գիւղի մասին առայժմ ոչինչ յայտնի չէ: Արդյոյշեալ գիւղերից կրկին վերադառնալով Էջմիածին, Յանձնաժողովը դիմում է կաթողիկոսին, խնդրելով Էջմիածնի գանձարանի բանալին: Ինչպէս արդէն նախօրոք որոշած էր, բանալին կաթողիկոսի մօտն է լինում, որը և կտրական կերպով մերժում է յանձնել: Յանձնաժողովը կ'ընում է դանձարանը և վերադառնում է Երևան: Այսօր երկրորդ օրն է, ինչ Երևանում են, բայց դեռ ոչինչ բանի չեն ձեռնարկել:

Յախշտակող Յանձնաժողովը Էջմիածնում մի արձանագրութիւն էր կազմել և տեղացի ստոր հայերից մի քանիսին ստորագրել տւել:

X. Ե Ր Ե Ի Ա Ն

Նախորդ նամակովս յայանել էի, որ համաձայն մի դաղտնի հեռագրի, հայոց եկեղեցական կալածները խելու օրը որոշած էր սեպտեմբեր 2-ը, բայց եկաւ սեպտեմբեր 2-ը և ոչ մի բան տեղի չունեցաւ մեզ անյայտ պատճառով, թէև դրա համար ակներև պատրաստութիւններ էին տեսնուում. դիմել էին Երևանի հայոց թեմակալի փոխանորդ Պարդիտնին, որ պատրաստի յանձնելու, տպագրել էին տւել յատուկ բլանկներ, հրահրագրեր, մարդիկ էին նշանակել և այլն:

Սեպտեմբերի 5-ի երեկոյեան, Երևանի Մասնաճիւղը մի շրջաբերականով դիմեց քաղաքի բոլոր խանութպաններին, պահանջելով հետևեալ օրը, սեպտեմբերի 6-ին, փակել բոլոր խանութները, իբրև սգի նշան, և չեքեալ փողոցներու:

Թէև Երևանում դեռ չէին սկսել գրաւել կալածները, բայց համաձայն Մասնաճիւղի վերոյիշեալ շրջաբերականի՝ սեպտեմբերի 6-ին Երևանի շուկայում բոլոր հայերի խանութներն ու արհեստանոցները փակւած էին: Գլխաւոր

փողոցներում, ուսաց նոր շինած եկեղեցու շուրջը, ոստիկանատան դիմաց և մի քանի աչքի ընկնող կէտերում սեպտեմբերի 5-ի գիշերը պարզած էին սև ու ճերմակ դրօշակներ. վերջիններից մի քանիսը զանազան մակագրութեամբ. — «Վորչի» միապետութիւնը, «Վեցցէ՛ ազատութիւնը», «Վեցցէ՛ն հայերի դարևոր իրաւունքները», և այլն:

Սեպտ. 6-ին սուաւօտեան ժամը մինչև 10-ը դեռ ծածանում էին սև դրօշակները, որոնք հաւաքւեցին ոստիկանութեան կարգադրութեամբ և տարւեցան ուսաց կայսերական հիմքերը պահպանող ժանդարմերիայի գլխաւոր գրասենեակը: Նահանգապետի հրամանով կանչւեցին բազմաթիւ հայ խանութպաններ և ոստիկանների հսկողութեան տակ ամբողջ օրը կարողացան բաց անել տալ միայն երեք խանութ: Այդպէս անցաւ այդ օրը: Հետևեալ օրը, սեպտ. 7-ին, դարձեալ փակ էին խանութները:

Թէ ի՞նչ կը լինի կալածները խելու ժամանակ՝ դժւար է դուշակել. թէև Մասնաճիւղի որոշումն է խաղաղ ցոյց անել, բայց ո՞վ կարող է նախատեսել գրգռւած ամբոխի անխելքները: Տրամադրութիւնը խիստ յուզւած է:

Երևանի նահանգապետը մի շրջաբերական է հրատարակել, որի մօտաւոր բովանդակութիւնը այս է. — «Բարձրագոյն հրամանի մասին — որ նպատակ ունի կալածները գրաւել լոկ շահագործելու դիտաւորութեամբ — չարամիտ (°) մարդիկ սխալ լուրեր են տարածել, իբր թէ գրանով կրօնն է խլում, եկեղեցին է խլում, ազգութիւնն է ոչնչացուում: Վառաժարութիւնը միայն բարիք (°) է ուզում անել հայոց ազգին»:

Եւ այլ այսպիսի յիմար բաներ, որ յիշեցնում են տաճկական հերքումները:

Ներքին գործոց մինիստրութեան վերջին գրութիւնից յետոյ, կաթողիկոսը նորից հեռագրով դիմել էր Գալիցին սրիկային և խնդրել էր միջնորդել կայսեր հետ տեսնելու: Գալիցինը պատասխանել է. «Մինչև կալածները չյանձնւին, անհնարին է միջնորդութիւնը»: Կաթողիկոսը պատրաստել է տւել մի ընդարձակ զեկուցագիր կայսեր մատուցանելու: Այդ զեկուցագիրը թարգմանուում է թէ գրաբառ և թէ ուսերէն, որպէս զի մօտ օրերս ուղարկելի Պետերբուրգ: Բաւական ընդարձակ գրութիւն է: Իական կէտերը սրանք են. պատմական մի տեսութիւն հայերի մատուցած ծառայութիւնների, բազմաթիւ ապացոյցներ հայերի հաւատարիմ հարստակութեան, լուրջ փաստացի հերքում զանազան չարամիտ կասկածների, որ տարածել են ուսական շփոթիտ թերթերը, և մանրամասն հաշիւ Էջմիածնի եկեղեցական կալածների ելքի ու մուտքի, թէև ամէն տարի կանոնաւոր հաշուետուութիւն է կատարւել և ներկայացւել կառավարչապետի դիւանին:

Խանութները փակելու համար Վաղարշապատում բանտարկւած են 35 հոգի:

Էջմիածին գնացող Յանձնաժողովը սեպտեմբեր 7-8-ին դբադւած էր կալածները ցուցակագրելով. արդէն արձանագրութիւն է կազմւած 20-25 գիւղացիների ներկայութեամբ, որոնց և ստորագրել են տւել: Մօտաւոր բովանդակութիւնն այս է. «Այսօրուանից Վաղարշապատ գիւղը հայոց եկեղեցու իրաւասութիւնից դուրս գալով՝ անցնում է երկրագործութեան և պետական կալածների մինիստրութիւնների իրաւասութեան տակ: Բարձ-

րագոյն Տրամանը ճշգրտութեամբ պէտք է գործադրելի ամէն մի շեղում խստիւ պատժելու է: Այսուհետեւ եկեղեցական կարածները գիւղացի կապալառուները գործ պիտի ունենան պետական գանձարանի հետ: Տեղացի ստոր հայերի վերաբերմամբ, որոնք ստորագրել են այդ արձանագրութիւնը, մեր ընկերները արդէն մի քանի թեթեւ պատիժներ են գործադրել:

**XI. Գ Ա Ւ Ա Ռ Ն Ե Ր Ո Ւ Մ**

Գանձակի արիւնոտ դէպքը ցնցեց ծայրէ իծայր ամբողջ կովկասեան Հայաստանը: Ժողովրդական ցոյցերը ստացան սիստեմատիկ բնանորոգիչն: Թիֆլիզը ճոգեհանգիստ կատարելով Գանձակի նահատակածների համար՝ տեւեց ազդանշանը և նրա օրինակին հետեւեցին ուրիշ քաղաքներ ու գիւղեր:

**ԼՕՌԻՈՒՄ** իւրաքանչիւր մի գիւղ — Ղարաքիլիսա, Ուզուշլար, Զալալօղլի և ընդ միւսի ետեւից կատարեցին նոյն առիթով հոգեհանգիստներ, որոնք ներկայ էր լինում հազարաւոր ժողովուրդ:

**ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅՈՒՄ** ամէն կիրակի տեղի է ունենում ցոյց: Խմբուում է ժողովուրդը, կատարուում է հսկում, արտասանուում են ոգևորիչ ճառեր եկեղեցու մէջ՝ երգուում են ազգային-յեղափոխական երգեր... Ոստիկանութիւնը լուռ հանդիսատես է լինում, չպատահանալով միջամտել: Յուզումը անսովոր է և կարելի է սպասել արիւնահեղ դիմադրութիւն ու ընդհարումներ:

**ՋԱԼԱԼՕՂԱՒՄ** այդպիսի մի խաղաղ ցոյցի միջոցին, երբ եկար մի երիտասարդ սկսել է խօսել ամբոխի առաջ ոստիկանութիւնը փորձել է ձերբակալել ճառախօսին, բայց ժողովուրդը բուն յարձակումով յետ է մղել նրան: Երիտասարդը աւարտելուց յետոյ՝ հանգիստ շարունակել է իր ճանապարհորդութիւնը դէպի միւս գիւղերը...

**ՂԱՋԱԼՈՒՄ** գաւառապետը, որ մի լաւ մարդ է, յարգած տեղական հայ ազգաբնակչութեան կողմից, կանչում է ժողովրդի ներկայացուցիչներին և առաջարկում՝ խաղաղ կերպով յանձնել եկեղեցական գոյքերը: Նրան պատասխանում են. «Աղա, դու գիտես, որ քեզ սիրում ենք. ինչ կուզես, կ'անենք քեզ համար, բայց այդ բանը չենք անի. մեռնել կայ, գոյքերը տալ չը կայ...» Գաւառապետի դրութիւնը փափուկ է. չգիտէ՝ ինչ կը լինի:

**ԲԱԹՈՒՄՈՒՄ** սեպտեմբերի 8-ին նոյնպէս կատարել է հոգեհանգիստ Գանձակի սպանածների համար. ներկայ են եղել մօտ 5,000 մարդ: Ճառախօսներ եղել են և այնտեղ Վոզակները վրայ են հասել երբ ժողովուրդը ցրած է եղել արդէն:

**ԱԽԱԼՔԱԼԱՔԻ** ամբողջ գաւառը արտայայտել է իր դալորթը և դիմադրելու պատրաստակամութիւնը հետեւեալ եղանակով Օգոստոսի 24-ին բոլոր շրջակայ գիւղերից եկել է իւրաքանչիւրից 20-ական, 30-ական մարդ՝ գիւղացիների ստորագրած բողոքագրերը իրենց հետ առած: Հաւաքել է այդպիսով 7-8 հազար մարդ: Եկեղեցու մէջ դեռ չաբաթ օրը կատարել է հսկում: Միւս օրը, կիրակի, այդ ահագին բազմութիւնը լցրել է եկեղեցին ու բանը:

Մուրադեան եպիսկոպոսի հոգեհանգստից յետոյ՝ մի օրիորդ սկսում է խօսել վերջին կայսերական կարգադրութեան առթիւ, յորդորում է ժողովրդին՝ դիմադրել բռնակալութեան: Այս խօսում է մի երիտասարդ. բուն

ու յուզիչ ճարտասանութեամբ նա ցնցում է ժողովրդին, և հազարաւոր ձայներ գոչում են նրա ետեւից. «Պատրաստ ենք մեռնել և չը թողնել բռնանալ մեր իրաւունքների վրայ»:

Այնուհետեւ բազմութիւնը խնւում է եկեղեցու բակում բողոքագրերի շուրջը: Ստորագրում են նրանք, որոնք տակաւին չէին ստորագրել: Հաւաքում է մօտ 10,000 ստորագրութիւն: Ընտրուում են երկու պատիրակներ, որ տանեն բողոքագրերը Էջմիածին:

Եղել են այդ շրջանում ևս յուզիչ միջադէպեր: Ծեծուել է մի գիւղի տանուտէր. որ հրաժարելիս է եղել ստորագրել բողոքագիրը: Սաստիկ ծեծուել են, միւսնոյն պատճառով երկու գիւղական քահանաներ ևս. գիւղացիք առել են նրանց ձեռքից եկեղեցու բանալիները և դուրս քշել իրենց շրջանից. «Դուք այլևս քահանաներ չէք» — ասել են նրանց:

**ԱԽԱՆՏԻՍԱՅՈՒՄ** ամբողջ հասարակութեան ներկայութեամբ բոլոր քահանաները պատարագ են արել և, ինչպէս լուում ենք, նոյվք են կարգացել կառավարութեան հասցէին: Յուզումները սաստիկ է: Սպասուում է մեծ ցոյց:

**ՍՈՒՒՈՒՄԻ** մօտ գտնւող Մ ծ ա ը ա գիւղը գնացին, կալածները գրաւելու համար, գաւառապետը իր օգնականով, մի քանի ուրիշ պաշտօնեաներով և 15 կօզակներով: Գիւղը ունի մօտ 150 տուն և մի քարաշէն գեղեցիկ եկեղեցի, որ առաջինն է Սուխումի շրջանում: Տեղ. հասնելով՝ գաւառապետը կանչել է տալիս քահանային ու երեցփոխին և պահանջում է եկեղեցու բանալիները:

Քահանան յայտնում է, թէ ինքը հոգևոր իշխանութիւնից ոչ մի կարգադրութիւն չէ ստացել և հետեւապէս ոչինչ չէ կարող տալ: Աւելացնում է, թէ եկեղեցու բանալիները գիւղացիները տարել են, լսելով որ կառավարութեան մարդիկ գալիս են առնելու: Գաւառապետը դիմում է գիւղացիներին և սպառնալիքներով պահանջում բանալիները: Գիւղացիք մերժում են: Այն ժամանակ հրամայում է կացնով խորտակել եկեղեցու դուռը: Ներս են մտնում առաջակորէն ու սկսում արձանագրել: Աւարտելուց յետոյ բռնութեամբ պահանջում են գիւղացիներից ստորագրել: Բացի չորս մարդից ոչ ոք չի ստորագրում:

**ԳԱՆՋԱԿԻ** գաւառում ոստիկանապետը ման է գալիս գիւղերը, բացատրում է օրէնքը, կարգում է Գալիցիինց գրած մի թուղթիկ՝ առանց վերնագրի և ստորագրութեան՝ տպած ուղեւորէն և հայերէն լեզուներով: ու առաջարկում է ոչ միայն յանձնել կայքերը, այլև ստորագրել մի շնորհակալական ուղերձ թագաւորին: Ոչ մի տեղ ժողովուրդը չի համաձայնել — «Մենք շատ ծառայութիւններ ենք արել ուս թագաւորին, իսկ նա ցանկանում է խլել մեր կոպէկներով հաւաքած եկեղեցական կայքերը — ինչպէս կը լինենք նրան շնորհակալ» — ասա նրանց պատասխանը:

**ՂԱՄԱՌԼՈՒ**, Նրեանի մօտ, սեպ. 4-ին, ոստիկանութիւնը հաւաքում է ժողովրդին և պահանջում է յանձնել կայքերը: Նրանք չեն համաձայնում: Պրիստաւը սկսում է ծեծել տանուտէրին նա էլ զայրանում, գցում է պրիստաւին ոտի տակ և սկսում է ծեծել: Ստորաժնիկները վրայ են թափում և ալատում պրիստաւին, որը ատրուձանակով վիրաւորում է հակառակորդին: Առաջ է գալիս ընդհարում: Պրիստաւը ստորաժնիկներով մտնում են

մի տուն և սկսում են հրացանաձգութիւն. ժողովուրդն էլ դրսից պաշարում է տունը և արձակում ասորձանակներ ու հրացաններ, մինչև որ վրայ են հասնում ուրիշ շատ ասորձանակներ և ազատում պաշարածներին: Գիւղացիները արդէն պատրաստ են եղել վառել այդ տունը: Գիւղացիներից սպանւած է 4 հոգի, 20-ի չափ վիրաւորւած են և մօտ 30 հոգի բանտարկւած:

Էջմիածնայ ՄԱՐՑ գիւղում (լոռու գաւառ) հարիւրաւոր զինւած հայեր բռնել են գիւղի ճանապարհները և չինօվիկները չեն համարձակուած գնալ այնտեղ: Պահանջել են զօրքեր Թիֆլիսից և Ալեքսանդրօպօլից:

ԱԳՈՒՆԻՍԻ գիւղացիները, երբ լսել են Յանձնաժողովի գալու մասին, զինւած դուրս են եկել և բռնել գիւղի երկու ճանապարհները: Յանձնաժողովը վախեցել ու յետ է դարձել:

ՀՈՒՇՈՒՄ և ՆՈՒԽՈՒՄ գաւառապետները փորձել են անում թուրքերին գրգռել հայերի դէմ: Հուշու գաւառապետը հաւաքել է թուրքերին և հետեւեալ ակնարկներն արել. «Լսել եմ, որ դուք զինւել էք և պատրաստել էք մեզ պաշտպանելու ու հայերին կոտորելու: Անչափ շնորհակալ ենք, բայց առայժմ մենք զօրքի ուժով էլ կարող ենք պաշտպանուել»:

Դրան թուրքերը պատասխանել են թէ՛ «Մենք ոչինչ չենք պատրաստում հայերի դէմ, նրանք մեր լաւ դրացիներն են»:

Նուխիում գաւառապետը հաւաքել է թուրքերին մզկիթում և հետեւեալ ձառն է խօսել. «Լսել եմ, որ դուք հայերի հետ ընկերանալու միտք ունէք, հայերը ձեզ խաբուած են, նրանք ձեր թշնամիներն են, նրանք ճաճկաստանում ջարդում են թուրքերին, դէմ են սուլթանին, դրա համար էլ ոռու կառավարութիւնը հիմա հալածում է նրանց... Բայց թուրքերը լաւ են հասկացել թէ բանը ինչու՞ն է, որովհետեւ նրանց մզկիթների կալածները նոյնպէս գրաւել են յարբուճիս 4-5 տարի սրանից առաջ»:

**XII. Տ Է Ռ Օ Ր**

Եկեղեցական կալածքների յափշտակման առիթով կովկասում կազմակերպւած Ին-ԲնԱՊԱՀՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՕՄԻՏԵԻ և նրա ՄԱՍՆԱՃԻՒՂԵՐԻ որոշմամբ՝ տեղի են ունեցել մահաւան պատժի հետեւեալ դէպքերը.

ԷՋՄԻԱԾՆՈՒՄ սպանւել է յափշտակիչ Յանձնաժողովի արձանագրութիւնը ստորագրողներից վատագոյնը՝ Ս ա ր - գ ի ս Փ օ թ է ե ա ն: Ահա մանրամասնութիւնները.

Կիրակի, սեպտեմբերի 5-ին, Ղաղարշապատի հրապարակում, վանքի բուրջի մօտ, ահագին բազմութեան ներկայութեամբ, տեւորիստ Ղարդան Պօղոսեան, քղեցի, յարձակուած է փօթեանի վրայ, վայր գլորում և դաշոյնի մի հարւածով մահացնում: Ինքը, դաւաճան Սարգիսը, վայր ընկած միջոցին, ասորձանակի երեք գնդակներով վերաւորում է մեր աղնիւ Ղարդանին, բայց վէրքը մահացու չէ լինում: Աղմուկի և իրարանցումի ձայնից վրայ են հասնում պրիստաւը, ստրաժնիկներ ևլն: Ղարդանը սկսում է փախչել դէպի Ղազարապատ տանող ճանապարհով: Զգալով, որ ստրաժնիկները մօտենում են իրեն և կալանաւորումը անխուսափելի է, րոպէսպէս վճռում է վերջ տալ և իր թանկագին կեանքին ու դաւաճանին սպանող դաշոյնով մահացու վէրք է հասցնում

և իրեն: Ստրաժնիկները բռնում են բանտ տանելու, բայց ճանապարհին նա վախճանւում է:

Ղարդանի հերոսական մահը մեծ ցաւ ու կսկիծ պատճառեց բոլոր վաղարշապատցիներին և մանաւանդ իր ընկերներին: Հ. Յ. Դաշնակցութիւնը, որի համեստ զինւորն էր այդ վեհանձն հոգին՝ կորցրեց մի անգնահատելի ուժ: Ժողովուրդը սակայն չափազանց գոհ է:

ՂՈՒՐԳՈՒՂՈՒԼԻ գիւղում սեպտեմբեր 15-ին տեւորիստները ատրձանակի չորս հարւած հասցրին քահանայ Յէր Գարեգինին, որը մատնութեան անհերքելի ապացոյց էր տւել Ղէրք թէև չի մահացրել, բայց վտանգաւոր է:

ԱՀՏԱՐԱԿՈՒՄ, սեպտեմբերի 13-ին, մի Լնոյն տեւորիստների ձեռքով սպանւել է մի թիւրք ստրաժնիկ:

ԵՐԵՒԱՆԻ ոստիկանատան աւագ գարադավօյի վրայ նոյնպէս փորձ եղաւ, բայց ապարդիւն — գնդակները վրիպեցին:

ԿԱՐՍՈՒՄ՝ Ինքնապաշտպանութեան կօմիտէի որոշմամբ՝ օր ցերեկով զլեւաւոր փողոցներից մէկում և ահագին ամբոխի ներկայութեամբ՝ ուշօրվէրի մի քանի հարւածներով շանսատակ արեց յայտնի թիւրք Հէրիֆ-բէյ, որ ոռուսաց ա ժ ա ն - պ ռ օ վ օ կ ա տ օ Ր ի դերն էր խաղում տեղական հայ հասարակութեան մէջ: Տեւորիստը երկու տեղից վերաւորել է նաև ոստիկանին, որ ուզել է նրան բռնել ու անյայտացել է:

ԱՆԱԼՔԱՎԱՔ գաւառի կ օ Ր ի գիւղի տէր-խաչատուր քահանան, որ դէմ լինելով մի որևէ բողոք յայտնելու, ամօթաբար խլել էր գիւղացիների ձեռքից նրանց բողոքագիրը և տւել ոստիկանապետին, արդէն ստացել է իր արժանի պատիժը — մի առաւօտ նրան գտել են սպանւած իր անկողնում:

ԱԼԵՔՍԱՆԳՐՕԼՈՒՄ դանակի հարւածներով վերաւորել է ոստիկան Ալեքսանդր Դարդիմանով:

**XIII. Վ Ե Ր Ջ Ի Ն Լ ՈՒՐ ԵՐ**

Ամէն տեղ բուն ժողովուրդը ցասման մէջ է, տարւած անսովոր ոգեւորութեամբ: Ալեքսանդրօպօլը, հայկական այդ ցնցած կենտրոնը, ներկայացնում է մի ճշմարիտ հրաբուխ: Յուզմունքը այնքան մեծ է, որ կառավարութիւնը չի վստահանում ուղարկել Յանձնաժողովը՝ գոյքերը պահանջելու համար: Գաւառապետը այն կարծիքն է յայտնել, որ պէտք է յետաձգել այդ գործողութիւնը: Ղտանգի առաջն առնելու համար՝ միջնորդներ են հրապարակ եկել երկու կողմից և բանակցութիւնների մէջ են: Էջմիածինը խառնակ վիճակի մէջ է: Կաթողիկոսը մնում է անասան:

Ներքին գործերի մինիստրը հեռագրել է Գալիցիին՝ «յետաձգել իրագործումը, եթէ դիմագրութիւնը մեծ է»: Գալիցիին պատասխանել է. «բարձրագոյն հրամանը կ'իրագործեմ մի քանի շաբթում»:

Երկու օր առաջ Երևանից գնացել են պաշտօնեաներ, զօրքով խլիւ Էջմիածնի դանձարանը: Կաթողիկոսը չի տւել բանակը և մեկնել է Գալիանէյի վանքը: Կոտրել են գանձարանը, սենեակի դռները և փողը — հազիւ քսան հազար — բերել են Երևան: Ղանքը պատած է զօրքով Երեկոյիսան, երբ ծերունի հայրապետը Գալիանէյից գալիս է դէպի վեհարան, զինւորները նրան դիմաւորում են սուհներով: Մի ժամ անցած՝ գալիս են կաթողիկոսից են ներողութիւն խնդրելու, ասելով, թէ զինւորները չեն



ճանաչելը: Որպիսի՞ դառն ըոպէներ հալածական Հայրապետի համար...

Արիստակէս եպիս. Սեդրակեան վերադարձաւ Սամարայից, ուր նրան և Սուքիաս եպիսկոպոսին կանչել էր Պէտլէն: Մինիստրը սպառնալիքներ է կարգացել նրանց, իսկ Սուքիաս եպիսկոպոսին՝ Երևանի ցոյցի առիթով, արտորել է Օրենքուրգ:

Կառավարութիւնը ստիպողաբար տեղեկութիւններ է տալիս Պետերբուրգ, փոքրացնելով կարելոյն չափ դիմադրութեան ուժը և չափը:

Պ ա շ տ օ ն ա պ է ս ո շ մի տեղ իսկապէս ոչինչ չէ յանձնուած, բացի Հաշտարխանից, Բեսսարաբիայից և քուրթայից, որտեղի տէր Գաւիթ քահանայն շատ անսովորաբար թող է տուել հրովարտակը կարգաւ ռուսերէն լեզուով եկեղեցու, իսկ երկու-երեք տեղացի երիտասարդների յանդիմանութիւններին էլ տուել է. «Գիտեմ, որ կաթողիկոսը կոնդակ է ուղարկել, բայց նա հիմա մեզ չէ կարող պաշտպանել, երբ կառավարութիւնը մեզ բանտը գցէ կամ արտորէ»:

Թիֆլիսում Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, վախենալով կառավարչապետի սպառնալիքներից, հրամանը ստանալուն պէս՝ գալիս է նշանակուած ժամին դպրոց և յանձնում դրամարկղը, բանալիներն ու գրքերը, հրաժարելով, սակայն, ստորագրել պրոտոկոլը: Գրանց անունները — իբրև առաջին դաւաճանների — պիտի յանձնեն պատմութեան: Գրանք են՝ Իվան Ալիսանովի իշխան Արսէն Բէհրութեան, բժիշկ Կարապետ (Գերասիմ) Ստեփանեան, Յովսէփ Ղազ. Տիգրանեան, Տիրայր վարդապետ և քահանայ Շերմազանեան: Քամոյնց եկեղեցու երեցիօս Արքայապետեանը նոյն ամսօրայի քայլն է արել, յանձնելով դեռ մի օր առաջ, և այժմ եկեղեցու շինութիւնների նորոգումը աւարտելու համար՝ ամէն օր խոնարհաբար գանձարան է վազում և կառավարութիւնից փող վերցնում:

Հայրիկը շարունակում է իր բռնած արի ընթացքը: Նամակ է գրել Թագաւորին ինքը, որտեղ ասում է, որ նա չի կարող դաւաճանել իր այն երդումին, որ տուել է օժտելու օրը — պաշտպանել Հայաստանայց եկեղեցին և նրա ունեցած իրաւունքները: Այդ նամակը նմանողութիւն ունի քրիստոսի Գէթսէմանեան այգիի աղօթքին:

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Լ Ա Թ Է Ն

10/23 յունիս, 1903

Ձկայ Թերևս Թիւրքիոյ մէջ ուրիշ նահանգ մըն ալ որոյ իսլամ տարը — քիւրդ, թիւրք կամ էջբէզ — այնքան բուռն հակակրութիւն մը տածէ դէպի հայը:

Մասմէտականի նախանձը. — Այս նահանգին մէջ հայը հանդերձ հագնելու, քիչ մը լաւ ապրելու իրաւունքէն զրկուած ըլլալէն զատ, իր կեանքը երկիւղի տակ կը համարի, եթէ դիմագծով անգամ գեղեցիկ ըլլայ:

Անցեալներ Զրհոր գիւղէն Գրիգոր անուն երիտասարդ մը Բաղէշ կը գնայ գործով: Գրիգորը դէմքով քիչ մը գեղեցիկ է և սիրուն թանձր պեխեր ունի: Ըուկայի մէջէն անցած ատեն, թիւրք խանութպանները նախանձի ու զայրոյթի շեշտով մը կը կանչեն ետեւէն՝ «Ուր կեր-

թաս, Ընդախի հայր», իբր թէ հասնանցի ոճրագործ համիդիյէ զօրապետ Ընդախը կամ անոր հայրը միայն իրաւունք ունին բնութեան պարգևած պեխերը կրելու:

Ուրիշ անգամ քիւրդ մը կը կանգնեցնէ յիշեալ Գրիգորը և կը հարցնէ թէ՞ որ տեղացի ես ու պատասխան կ'ընդունի: — «Ե, ըսել է դու հայ ես, կը հարցնէ քիւրդը, եթէ քաղքէն դուրս հանդիպէիր ինձի, քեզ այդ պեխերուդ համար կըսպաննէի, մեղք է, որ գեաւուրը այդպիսի պեխեր ունենայ»: Եւ ինչո՞ւ չսպաննէր. ո՞վ պիտի արդիւնէր զինք — կառավարութիւնը, բայց չէ՞ որ կառավարութեան պաշտօնեաներն ալ նոյն ոգին կը կրեն:

Ձերբէջ Ալի պէկը, որ քանի մը տարի առաջ անուր տանջանքներու տակ Ախլաթի հայ բնակչութիւնը ցիր ու ցան ըրաւ, Սախուայի ջուրին վրայ կը հանդիպի յիշեալ Գրիգորին, որ Բաղէշէն կը վերադառնար: Կը կանչէ Գրիգորը քովն և կը պատերի. «Կերթաս այդ պեխերդ կը կորես, եթէ երկրորդ անգամ քեզ այդ կերպարանքով տեսնեմ, ջարդ ու փշուր կ'ընեմ»: Սախանձի ի՞նչ չար ոգի. բնութեան դէմ անգամ պիտի կուրի իսլամները հայը զոհելու համար: Ասիկա է ան երկիրը, որ կը կոչուի Տաճկաստան...»

Ջինուորի դիակ. — Ամսոյս երեքին Կճակ, Թէղուտ և Ծղակ գիւղերու սահմանին մէջ թիւրք զինուորի մը սպաննուած դիակը գտնուեցաւ: Կառավարութիւնը անմիջապէս ձերբակալեց կծկուացի հայ պատանի մը, որ փայտաւր թուխն լեռ կերթար վառելիք ճարելու: «Ի՞նչ այդ փայտաւր բերած էիր այս դիակը թաղելու համար», կ'ըսէն տղուն, ու անկէ իվեր տղան բանտն է: Երեքը ալ գիտեն, թէ հայու մը գործ չկրնար ըլլալ այդ սպանութիւնը, քանի որ զօրքը միշտ զինուած է, իսկ հայը դանակ անգամ չկրնար կրել: Սակայն ծայրայեղ պարագան երթադրենք: Պահ մը այնպէս մտածենք, թէ հայը երկիւրէն, օրէն իջած գործիքով մը սպաննած ըլլայ այդ զինուորը. ո՞ր յիմարն էր այն անձը, որ պիտի համարձակէր օր ցերեկով դիակը թաղելու գնալ այնպիսի ճամբայի մը քով, որ վայրկեան մը պարապ չի մնար ճամբորդներէ. Բուլանքիէն, Արծկէէն, Արճէշէն, Ախլաթէն Բաղէշ գնալու համար այդ ճամբայով կ'անցնին:

Ասով միայն չբաւականացաւ կառավարութիւնը և ձերբակալեց վերոյիշեալ երեք գիւղերու գիւղապետները: «Ձեր գիւղերու սահմանին մէջ սպաննուած է այս անձը, ձենէ կը պահանջեմ սպանող», կ'ըսէ: Որպիսի՞ արդարադատութիւն, անդին տասնաւոր հայեր կըսպաննին, սպաննողները մատնանիշ կ'ըլլան, վկանելով կապացուցի ոճրագործութիւնը, և չի ձերբակալեր, բայց երբ տաճիկ մը սպաննելի, բազում հայեր բանտ կը լեցնին:

Ամսոյս 7-ին նոյն ինդրի առթիւ կառավարութիւնը ձերբակալեց Շամիրամ գիւղի գիւղապետը և երկու գիւղացիներ, որովհետեւ զինուորի սպաննուելուց օր մը առաջ այդ գիւղէն անցած կ'ըլլան:

Երկրաշարժի քարիքը. — Լսած կ'ըլլաք ապրիլ 15-ի գիշերուան ահաւելի երկրաշարժի մասին: Որքան անիկայ աւերիչ էր իր կործանած տուներու և փլատակներու տակ թողուցած դիակներու տեսակէտէ, այնքան ալ փրկարար եղաւ այս նահանգի և յարակից շրջակայ նահանգներու հայութեան համար: Թէ հոս, թէ Աւանի նահանգի մէջ և թէ Խնուս թրքութիւնը այսօր հրապարակաւ կը խօսի թէ՞ «հայերը թող երթան շնորհակալ ըլլան, որ այս սոսկալի աղէտը տեղի ունեցաւ և իսլամ-

ներէն մեռնողներ շատ եղան. ասի աստուածային պատիժ մը համարեցինք և ետ կեցանք հայերը կոտորելու մեր մտադրութենէն: «Հայեր, կ'ըսեն քրդերը, եթէ երկու օր վերջ եղած ըլլար այդ երկրաշարժը, հիմա ձեր մեծամասնութիւնը անդիի աշխարհ չլա՞ծ կ'ըլլար»:

Անցաւ, այո՛, մեծ կոտորած մը, որը կ'երևի վերէն գծագրած էր: Սակայն անցաւ նաև երկրաշարժի վատ տպաւորութիւնը. իսլամները սկսեցին մոռնալ իրենց կրօնակիցներու աղէտին զոհ գնալը ու վերսկսեցին խոստով աչքով նայիլ հայերուն: Ու շատ բնականօրէն վտանգի տակ եղող հայը կը հարցնէ. «Արդեօք երկրաշարժ մը պիտի տեղի ունենայ վերստին մեզ փրկելու այն աղէտէն, որ ակնյայտի կը յատենայ մեզ կործանելու»...

Նամակ մը. — Թէ որքան սպառնական է վտանգը, կրնայ հասկացիլ Բուլանընէն ստացած մէկ բարեկամիս հետեւեայ նամակէն, որ ամսոյ 6-ին գրած է.

«Սիրելի, ալ սա բարբարոս քիւրդերու ձեռքէն չենք կրնար օր մը տեսնել: Մեզ արիւնքամ ըրին. բայց երանի՛ թէ միայն այդ ըլլար: Այժմ ալ արիւնկզակ գայլերու պէս գրգռուած են: Մենք ալ դիշեր-ցորեկ ահ ու դողի մէջ ենք: Հաւատացէք, որ այս 15 օր է, ինչ մեր գիւղի (Ե. . . ցի է բարեկամս) մէջ ամէն մարդ գիշերները փայտ մը ձեռքին իր դրան առջև կը կենայ. ալ չգիտեմ, մտքերնիս փայտով իսկ անձերնիս պաշտպանել է: Թէ վտանգի ժամանակ փախչելով կենաքերնիս ազատելը: Ինչ օր է, որ ընդհանուր սարսափը աւելի սաստկացաւ: Իզաթ պէյը 45 ձիաւորով կը շրջի գաւառին մէջ, պատճառը չգիտեմք. միայն այսքան յայտնի է, թէ հայերուս հաշտ աչքով չի նայիր:

«Ասկէ զատ գայմագամն ալ իր ընթացքովը մեր սուկումը կրկնապատկած է: Երկու օր անգամ մը Յափրի գիւղը կերթայ շէյխերու հետ խորհրդակցելու: Այսպիսի բան, փորձառութեամբ գիտենք, միայն կոտորածի մը պատրաստութեան օրերուն տեղի կուրծնայ: Շատ կը կասկածիք:

«Ալան-Թալանի մասին կը հարցնէք: Սիրելիս, մեղք կը համարեմ տեղեկագրել. ո՞վ չգիտէր մեր կողմերու վիճակը: Դեռ 3 օր առաջ կառավարանիստ Կոփ գիւղէն, ուր 3 պօլակ զօրք կայ և գայմագամ կը նստի իր պաշտօնեաներով, 200 ոչխար, 7 գումէշ և 5 եզ տարին, և սակայն զինուոր մը իր տեղէն չչարժեցաւ այդ Թալանը ետ բերելու համար.

«Սպաննութիւնները բազմաթիւ են:

«Ընդհանուր զգացումը այն է, թէ երանի մի դէպք, յեղափոխական շարժում մը պատահէր, թող մեզ բոլորս սրէ անցնէին: Ի սէր ազատութեան, եթէ միսթարական լուր մ'ունիք, հաղորդեցէք. գէթ ատեն մըն ալ անով մեզ խաբենք»...

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Զ Ն Կ Ա Յ Է Ն

25 յունիս, 1903

Մարդ բնական դժկամակութիւն մը կըզգայ տխուր լուր մը հաղորդելու համար, բայց ցուրտ, անզգայ իրականութիւնը կայ և կը մնայ այնպէս, ինչպէս որ է, ո՛չ կ'ազդուի, ո՛չ ալ կը փոխուի: Ու մենք հարկադրուած ենք հետեւելու այդ իրականութեան:

Դժբախտ կ'ընենք. — Յունիսի սկիզբներուն պաշտօ-

նեայ մը, առանց իր դիտմամբ ըրած ըլլալը հրատարակելէն վախնալու, քաշելու, կոխկրտել կուտայ իր ձիին հայ կին մը, անոր հետ նաև 4-5 տարեկան տղայ մը: Կինը մեռաւ նոյն օրն իսկ: Պաշտօնեան բանտն է, կը հարցաքննուի, բայց, իհարկէ, յօտ օրէն ազատ պիտի արձակուի. հակառակը հաստատող պատճառ մը չունինք:

Քանի մը զինուորներ, քաղաքին գրեթէ կից հայերուն գերեզմանատան մէջ, կը լլկեն խոտաքաղ հայ կին մը, զոր քովի դաշտէն առևանգեր էին: Կինը 5-6 օրէն մեռաւ: Զինուորները անյայտ են:

Քննիչ կատարած. — Յունիս 16-ին, երկուշաբթի առտու, քաղաքը խիստ հսկողութեան մը տակ տեսան երջկացիները: Ամէն հայ հոգեկան տագնապ մը ունեցաւ: Մէկ երկու օրէ իվեր կը խօսուի՝ թէ Սեպուհի հերոս Ռուբէնի մահուան պատիժը պիտի գործադրուէր, և իրօք՝ այդ առտու կանուխ կախեր էին Ռուբէնը, կախազան հաներ էին հայ հերոսը: Բունակալութեան, անբարոյականութեան, սրիկայութեան մարմնացումը—թիւրք կառավարութիւնը—մահով պատժեց վայրկենական տկարութեան մը ազդեցութեան տակ իր յօժար կամքով անձնատուր եղած Քեռիին: Բնականաբար հասկցնել կ'ուզէ տաճիկը, թէ նոյնիսկ անձնատուութիւնը չի խնայիր, թէ սխալ է թիւրք կառավարութեան գթութեանը ապաւինել, թէ անոնց համար, որոնք կուրի դրօշակը պարզեր են, այդ ասպարէզին վրայ միայն պէտք է իննան:

Աւագազկապետի ներումն. — Հագիւ երկու-երեք օր կ'անցնի, և ահա քաղաքին մէջ թափօր կը կազմուի՝ կայսերական ներումով մը պտտցնելու համար: Համալուսեր քիւրդ աւագակապետ Բաքօն և իր ընկերները: Ասիկա այն աւագակն է, որու շահատակութիւնները չափ ու սահման չունին, որը դեռ անցեալ տարի անգլիական հիւպատոսը կողոպտեց ու անպատիժ մնաց և այսօր ներումի, փառքի, պատւի կ'արժանանայ: Ուշագրաւ հակասութիւն, մէկ կողմէն մահ՛ հայերուն, միւս կողմէն ներումն, թողլուութիւն ու քաջալերութիւն՝ քիւրդերուն: Սակայն պէտք չկայ զարմանալու. այդպէս է ամբողջ թիւրք կառավարութեան ներքին քաղաքականութիւնը դարբեր է ի վեր:

Թիւրքի կերքը. — Անցեալ օրեր քանի մը փայտահատ թիւրքեր կարմրեցի Թորոսեան Սուրէնը, որ անտառէն փայտ ըրեր՝ գիւղ կը դառնար, անմիջապէս Կարմիր գիւղին յօտիկը ճամբան կը բռնեն և շատ չարբարանքներ տալէն ետքը՝ իր իսկ գօտիովը կը խեղդեն զինքը և կը ձգեն կը փախչին:

Բարեբախտաբար քանի մը ժամէն վերջը՝ կիսամեռ վիճակի մէջ կ'ուշաբերի (եթէ՛ գօտիի տեղ չլան գործածուած ըլլար, մահը պիտի ապահով ըլլար) և քաշքուտելով հագիւ գիւղը կը հասնի: Գիւղը իրար կ'անցնի: Շրջականերու միտիրն իմանալով, քանի մը ոստիկաններու հետ խեղդողը քաղաք կը բերէ: Մարդասպանները, որոնք քաղաք եկեր էին փայտ ծախելու համար, կը հանդիպեն բուն իսկ խեղդողին, որ նշաններով կը հասկցնէ ասոնց ըլլալը: Թիւրքերը կը ձերբակալուին, կը հարցաքննուին, կը խոստովանին իրենց ոճիրը և կը բանտարկուին... իհարկէ երկու օր ետքը ազատ արձակելու պայմանաւ: Խեղդողին բերնէն արիւն կուգայ, տակաւին կեանքը վտանգի մէջ է:

Շրջակայ վանքերը. — Շրջակայ վանքերը բռնաբարուին ամայի դարձան. Աւագ վանքի բնակիչները լորովին ամայի դարձան. Աւագ վանքի բնակիչները

Հաւաքապէս քաղաք գաղթեցին: Միւս վանքերը ոստիկաններ ղրկեցան, որոնք արդէն ինքնին պատուհասներ են:

Գիւղացիներու թշուառութիւնը իր ծայրագոյն աստիճանին հասած է: Շատեր կրօնափոխութեան վրայ կը մտածան, ուրիշներ գաղթելու վրայ: Կը լսենք, քիւրդերը միշտ զինուած և 30-40 մարդէ բաղկացեալ խումբերով այսօր այնինչ գիւղը գացեր դրամ կողոպտեր են, երէկ այնինչ գիւղի տաւարը քշեր են:

Օրինակի համար Տէրէքէօյի քիւրդերը քաղաքէն հազիւ կէս ժամ հեռու Սրպիհան գիւղացի Պազարճեան Կիրակոսէն բռնի կերպով դրամ առեր են՝ թէ ինչ է զէնքի պէտք ունին, իսկ դրամ չունին: Անդին ուրիշ քրդեր Երկան գիւղին տաւարը քշեր են: Փիւսկիւի տղաք ըսած քիւրդ աւազակախումբը, Տրսպիզօնի ճամբային վրայ, վաճառականի բռններ զարկեր և 100 ոսկիի արժողութեամբ ապրանք յափշտակեր են, և շն, և յն:

Լարևած դրութիւն. — Երէկ չէ առջի օրը քաղաքին թիւրք և հայ բնակչութիւնը ահ ու արսափի մէջ ընկաւ. գիշերը ժամը 3-4-ին յանկարծ զինուորական խիստ հսկողութիւն մը կ'ըսկսի. քաղաքը հեծեալ և հետևակ զինուորներով շրջապատեցաւ: Հետևեալ լուրը կիմանանք՝ թէ մաս մը քիւրդերու գետով անցնելը իմանալով՝ կառավարութիւնը կարծեր է՝ թէ քաղաքը պիտի կոխեն:

Ընդհանուր անիշխանական վիճակ մըն է, որ պիտի շարունակի՝ քանի թիւրքիան խեղդամահ չէ եղած:

Բանտարկու իւններ. — Ապրիլի վերջերին Երզնկայի շուկային մէջ 5-10 ոսկիի արժէքով գողութիւն մը կատարուեր է: Գիշեր կը յայտնուին քիւրդեր և զինուորներ, որոնք իրենց գողցածը բաժնելու առեն՝ կըսպաննեն ընկերներէն քիւրդ մը: Կըսկսին շարք մը խուզարկութիւններ, և որովհետև սպաննածի դիակը կը գտնուի հայու մը աղբանոցին մէջ, տեղի կունենայ 15 հայերու ձերբակալութիւն, մինչդեռ գողութիւնը ըրած և քիւրդին սպաննած զինուորներն ու քիւրդերը, որոնք անունով ցոյց տրուած են, չեն ձերբակալուիր: Հաւատալու բան մըն է՝ ուրիշ երկրի մը մէջ բացի թիւրքիայէն:

Հազիւ այդ առթիւ ձերբակալութիւնները վերջ գտեր էին և ահա ուրիշ ձերբակալութիւններու շարք մըն ալ կը պատմեն՝ իբր թէ յունւարի մէջ արտասահմանի խմբերէն մէկը նամակ մը կը ղրկէ հոս երկու թիւրք զաջաղիններու (մաքսանենգ, փախստական) հետ: Նամակը կառավարութեան ձեռքը կանցնի ու դարձեալ իր հասցէին կը ղրկուի: Խնդիրը առով կը փակուի մինչև այս օրեր. բայց երբ քիւրդին սպանութեան խնդիրը երևան կուգայ, անմիջապէս կը ձերբակալուին կրկին քանի մը երիտասարդներ և անոնց հետ օր. Սրբուհի Եանրքեան, որոնք իբր թէ առնչութիւն ունեցեր են վերոյիշեալ նամակի հետ:

Աւի փաշայի անկումը. — Մայիսի վերջերին յանկարծ բարձրագոյն հրամանով Պիթիզի նախկին կուսակալ Ալի փաշան, որ Սրբուհի սպաննողն է և որ իր նախճիրներով առեն մը օրուան մարդը եղաւ՝ բանտարկուեցաւ: Աճիռն է՝ եօթ տարի բերդարկութիւն և պաշտօնանկութիւն: Այս առթիւ երկու կարծիք կայ. մէկը՝ թէ իր գործած վայրագութիւններուն համար կ'ըլլայ միւսը՝ թէ սուլթանին հակառակ իր մէկ գրութիւն ձեռք անցած ըլլայ: Ով կը ճանչնայ թիւրքիան, ան չպիտի կասկածի՝ թէ ո՞րը այս ենթադրութիւններէն ճիշդ կրնայ ըլլալ:

Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Խ Ա Բ Ր Ի Կ Ն Ե Ր

(ՀՍԱՆՉՈՐՈՍԵՐՈՐԻ ՆԱՄԱՅ)

Պետերբուրգ, սեպտեմբերի 4

Հետևեալ վկայագրիները, որ առաջ ենք բերում իբրև նմուշ նոր և պերճախօս լուսաբանութիւն են Կովկասեան սահմաններում տիրապետող քաղաքականութեան:

Բացառիկ չեն այդ տեսակ թագնուած կարգադրութիւնները: Նոր հովերի սկսման օրից՝ միապետութեան դիւանատները հեղհեղուում են դրանցով, իբրև մշտական հրաւեր՝ հսկելու և հետևելու այն տարրին, որի ամեն մի քայլը նկատուում է իբրև քաղաքական շարժման նախանշան:

Երևի շատ չի անցնի, և դիւանատների մէջ ծրող և արթնացող դժգոհութեան ոգին հրապարակ կը բերի գաղտնի թղթերի այնպիսի նմուշներ, որոնք սարսուռի հետ միասին ամենախիստ ցատում կ'ազդեն խաբուած հասարակութեան:

Ներկայ վկայագրիները ձեռք են բերած կովկասեան զանազան քաղաքներում, — թէ ինչ ճանապարհով՝ դա ձեռք բերողների գաղտնիքն է — հրատարակութեան տալու գովելի նպատակով:

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ԳՂՂՏՆԻ

ՀԱՂԱՔԱՑՈՒՄԱՆ ՄՄՍԻ

ԿԱՌԱՎԱՍՐՁԱՊԵՏԻ

Գ Ր Ա Ս Ս Ծ Ն Ծ Ա Կ

Պ. Ձինուրական Նահանգապետին

№ 480

4 ապրիլ, 1903 թ.

Կարսի Նահանգի

Թիֆլիս

Համաձայն կառավարչապետի պաշտօնակատարի տեղեկութիւններին՝ ստացած Ասիական թիւրքիայից, թիւրքաճայերը՝ դրուած հայ յեղափոխական կոմիտէների գործակալների միջոցով, պատրաստուում են արտասովորութեան վերջինիս նպատակն է՝ մեր Անդրկովկասեան հայերի օչնութեամբ տեղիք տալ թիւրքերին դիմելու խիստ միջոցների և այդպիսով դարձնելու հայերի վրայ Եւրոպայի ու շաղկապութիւնը, որը սնուում է բարենորոգումների իրագործման վրայ և րոպական վիլայէթներում եւ մոտանում է, որ նոյնպիսի բարենորոգումներ խոստացուել են սուլթանի կողմից նաև ասիական վիլայէթներին:

Թիւրքաց իշխանութիւնները զանազան նախադրուական միջոցներ են ձեռք առնում իրենց հպատակ հայերի ապստամբութեան դէմ և աշխատում են կատարելապէս անջատել նրանց մեր հպատակ հայերից, որոնք ըստ կրեւոյթին՝ շատ գործունեայ մասնակցութիւն ունեն արտասովորութիւնը նախապատրաստելու մէջ. սրա հետ միասին թիւրքերը հաւատացած են, որ բոլոր կարգադրութիւնները լինում են Անդրկովկասեան հայերի կողմից:

Ուրիշ տեղեկութիւններ կամեմաս՝ օտմանեան կառավարութիւնը իր ձեռքի թակ ունի անհարգելի ասպայցիներ, որ ասիական վիլայէթների հայերի պատրաստուում են ապստամբելու իրենց կառավարութեան դէմ, մշտական յարաբերութիւններ ունենալով կովկասեան հայ յեղափոխական կոմիտէների հետ: Ենթադրութիւն կայ, որ խոսնակութիւնները պիտի սկսեն զարնան սկզբին՝ Կովկասից թիւրքիա ամենող ճանապարհները բացելուն պէս:

Թիւրքերի կարծիքով զլխաւոր կէտերը, որտեղից Անդրկովկասեան հայերը պիտի ներս խուժեն թիւրքիա, են՝ Կաղզւան եւ Օլթի:

Այս բոլորի մասին պատիւ ունենք յայտնել Ձերք

պայծառափայլութեան, ի գիտութիւն եւ հարկաւոր դէպ-  
քում ի պատշաճ տնօրինութիւնն<sup>6</sup>:

(Ստորագրութիւն)

**ԶԻՆ. ՆԱԿԱՆԳԱՊԵՏ**

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ

**ՀԱՏ ԿԱՐԵՒՈՐ**

ԴԱՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ԿԱՏԱՌԵԼԱՊԵՍ ԴԱՂՏՆԻ

№ 143

13 ապրիլ 1903 թ.  
Կարս

Կարսի Շրջանապետին

Կարսի ոստիկանապետը իր ղեկուցադրով՝ ապրիլի 11-ից, № 67, հաղորդում է, որ՝ ազնւոյնների միջոցով իր հաւաքած տեղեկութիւններին նայելով՝ փախտակաւ հայերի մէջ անպայման շարժում եւ պատրաստութիւն կայ կարելիութեան առաջին դէպքում թիւրքիս անցելու Պարսկաստանի վրայով, որսեղ, ըստ եղած տեղեկութիւնների, նրանք պարտի կօմիտէից պիտի ստանան զէնք, փամիռչաներ, զոր եւ մինչեւ անգամ դրամ են թափաղարում են սահմանը անցնել Սուրմալուի գաւառից: Կ ար ս ի չըջանի՝ Բաշ-Շորագեալ (°), Բաշ-Քատիքլար, Աղ-Քատիքլար, Աղզըլ-Քիւրիք-Ղերէ, Փայգեկլան, Շորաֆ ու Սաս-Չիլալիք գիւղերում, այլեւ Կ ա ղ շ ա ն ի չըջանի՝ թիւրք, Աղզըլ-Ղոջ եւ Բաշ-Քիլիսա գիւղերի տներում եւ գոմերում՝ պահեստի հայ զինւորները զինավարժութիւն են սորվեցնում 6-6 հոգուց բաղկացած խմբերին, որի համար ստանում են վճար մի ինչ սր ընկերութիւնից: Իսկ առհասարակ բոլոր հայ գիւղերում կատարում է դրամական ժողովարարութիւն: Գիշերները՝ 10-15 հոգուց բաղկացած զինւած խմբեր գիւղէ գիւղ տեղափոխութիւններ են կատարում:

Որովհետեւ վերոյիշեալ տեղեկութիւններից մի քանիսը հաստատում են նաեւ ապրիլի 11-ի № 167 ձեռնարկագրով հայերի մէջ նկատուող շարժման եւ ձեր չըջանի համարեալ որ հայ գիւղերում կատարուող դրամական ժողովարարութիւնների վերաբերմամբ, — ուստի, ի լրումն ներկայ ապրիլի 2-ից եւ 5-ից, № № 120, 123, ձեռք արած առաջադրութիւններին, ինչպէս նաեւ անձամբ իմ ձեռք տուած ցուցմունքներին, յանձնարարում եմ:

1) Հիմնել, ըստ ձեր հայեցողութեան, հայ գիւղերում ոստիկանական պահակամտններ, հայերի գործողութիւնների վրայ հսկելու եւ թոյլ չտալու համար, որ նրանք խմբեր զինեն, դրամ ժողովներ եւ առհասարակ կարգն ու հանդուստութիւնը խանգարեն, իսկ եթէ — մարդկանց պակասութեան պատճառով — կարելիութիւն չկայ անհրաժեշտ թւով պահակամտններ հիմնել, այդ դէպքում կազմակերպեցէք յաճախակի եւ ըստ կարելուսն անընդհատ պոստներ հայ գիւղերի մէջ, ինչպէս եւ աւելի անհանդիստ ու կասկածելի վայրերում:

2) Առանձին ուշադրութիւն դարձնել՝ մանրամասնօրէն եւ հանդամանօրէն պարզելու Փարագետ գիւղի բնակիչ Կիրակոս Պեարսոսովի արած յայտնութիւնը՝ թէ՛ Վերամի ժողովարարութիւն անում են Բէօդիք-Սաթըլըլը գիւղում՝ Աւետիս Սարգիսովը, եւ Փարագետ գիւղում Միսաք Սատուրով ու Նահայեա Արուստովը, եւ իմանալով՝ թէ՛ ում են յանձնում ժողոված գումարները, առանց յետաձգելու հաղորդել այս մասին անհրաժեշտ տեղեկութիւնները պրօկուրորական իշխանութեան եւ ժանդարմների վարչութեան:

3) Պայտօնական գործերով կազգւան անելիք ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ, խնդրում եմ Ձեզ անյապաղ անձամբ գնալ հայ գիւղերը՝ իրերի դրութիւնը տեղում տեղը պարզելու եւ հանդամանքներին նախձ անհրաժեշտ կարգադրութիւններ անելու, որպէս զի աւելի լաւ եւ աւելի իրական կերպով կազմակերպեն ներկայ գործի համար անհրաժեշտ միջոցները:

4) Կարգադրութիւն անել, որ ապրիլի 10-ին, առա-

ւտեան ժամը 10-ին, Կարս քաղաքում ինձ ներկայանան Մացրա, Չախ, Բէօդիք-Սաթըլըլը, Փարագետ, Բէկլի-Ախմէտ, Իօյլանալի, Բէքնա եւ Չերմալը գիւղական տանուտէրները օգնականները:

Հայկական շարժման պատճառով ազնւոյն պահելու ծախսերի նախավճարը Ձեզ կուղարկել չլստով՝ իսկ առայժմ միջոցները քիչ լինելով՝ յատկացում է 200 ռուբլի<sup>6</sup>:

Գննելու-մայրո ՍԱՄՕՅԼՈՎ  
Դրասնեանի կառավարիչ ՊՕԼԱԿԻՑ

**2. Ժ. 4.**

**ՀՈՒՏԱՓՈՅԹ**

ՇՐՋԱՆԱՊԵՏ ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ

ԳԱՂՏՆԻ

№ 172

12 ապրիլ 1903 թ.  
Կարս

Շրեւանեան նահանգական

ժամադրական վարչութեան  
Կառավարչի օգնականին

Իմ ունեցած տեղեկութիւնների համեմատ՝ ինձ յանձնուած չըջանի մի քանի հայ գիւղերում նախկին հայ գաղթականների ձեռքով կատարուած են զրամական ապօրինի ժողովարարութիւններ՝ նպատակ ունենալով օգնել հայ ազատագրողներին, որոնք մտադիր են 10-15 հոգուց բաղկացած խմբերով մայիս ամսին անցնել մեր սահմանից դէպի թիւրքական հողը եւ խառնակութիւններ առաջ բերել այնտեղ: Ինձ հասած հաստատ տեղեկութիւններին նայելով, զրամական ժողովարարութիւններ կատարում են՝ Չարուչ գաղի Բէօդիք-Սաթըլըլը գիւղում գաղթական Աւետիս Սարգիսովը, նոյն բաժնի Փարագետ գիւղում Ալէքսանդրապօլ քաղաքի բնակիչ Միսաք Սատուրով եւ գաղթական Նահայեա Արուստովը:

Այս մասին պատիւ ունեմ Ձերդ բարեհնչութեան հաղորդել ի կարգադրութիւն<sup>6</sup>:

Ստորագրած է ԿՈՍՄԻՆՈՎ

Միաժամանակ Կարսի շրջանի շրջանապետը առանձին թղթերով, № № 179, 180, 181, 182, 183, գրում է Շորագետի, Սողանլուի, Աղզարի եւ Կարսի մասերի իր օգնականներին առաջարկելով ձեռք անել միեւնոյն նման վերաբերմամբ բոլոր հարկաւոր մեղքները ամէն ըստ պարզելու եւ յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկելու համար:

Թարգմանութեան ճշգրութիւնը, ինչպէս նաեւ բնագիրների հարադատութիւնը, ըստ ամենայնի վաւերացնում եմ:

Է. ԱԿՆՈՒՆԻ

**Ն Ա Մ Ա Կ Բ Ա Գ Ի Ի Ց**

1 օգոստոս, 1903

Նախորդ նամակումս ես գրել էի այն վճիռների մասին, որ ընդունեցին նաւթագործները վերջին գործադուլի առիթով: Այդ վճիռները իհարկէ անյապաղ ուղարկուեցին գործարանների եւ հանքերի կառավարիչներին ի գործադրութիւն: Սակայն կառավարիչները, վախենալով ի գործադրութիւն, իսկոյն չկատարեցին իրենց տէրերի կարգադրութիւնը, այլ իրենք եւս, խորհրդակցական մի ժողով կազմելով՝ որոշեցին միառմի քննել բանւորների պահանջները եւ կարծիք յայտնել գործատէրերին՝ թէ որոնք դրանցից կարող են բուարարութիւն ստանալ:

Համեմատելով բանւորների պահանջները կառավարիչների ընդունած որոշումների հետ, կարելի է տեսնել որ, բացի մի քանի կարեւոր կէտերից, մնացածները կառավարիչների ժողովը ընդունելի է համարել կառավարիչների ժողովին հետեւեց կրկին գործատէրերի ժողով:

ուր հուր ու կայծակ տեղաց կառավարիչների դիմին և ընդունեց նախկին վճիռների վրայ պնդելու որոշումը:

Մինչ այս, մինչ այն՝ բանւորները՝ չունենալով ընդհանուր դրամարկղ տեղ-տեղ սկսեցին ներքեւը իսկ կառավարութիւնը դիմեց խմբական ձերբակալութիւնների: Աերջիններս թիւը այնքան մեծ էր, որ ոչ բանտերում, ոչ էլ ոստիկանատներում այլևս տեղ չկար և ստիպւած էին նոր ձերբակալողներին ուղարկել Կասպեան ծովի նարգեն կղզին, 40-50 վերստ հեռու Բագուից: Բացի դրանից ահագին խմբերով բանւորներ քշեցին իրենց ծննդավայրերը՝ անցագիրների վրայ նշանակելով «Մասնակից գործադուլի»:

Ազատ բանւորները այս խտտութիւններին պատասխանեցին մի շարք հրդեհաձգութիւններով, որ տեղի ունեցան օգոստոսի 16 և 17-ին: Աերջնական կորստից վախենալով, համեմատաբար փոքր ֆիրմաները սկսեցին տրտնջալ մեծերի վրայ և պահանջել զեջուֆներ անել բանւորներին: Զը համակերպել այլևս անկարելի էր—և ահա այն բոլոր պահանջները, որ կառավարիչների ժողովը կարելի էր համարել ընդունել համարեա բոլորը արդէն ընդունել կամ ընդունում են տէրերից, իկատա-

րեալ պարտութիւն բուրժուալիայի և կառավարութեան: Երբ ամէն բան հանգստանալու և սովորական ուղին մտնելու վրայ էր, Պետերբուրգից Բագու եկաւ ժանդարմների շեֆ Փօն-Ալլը... այն Փօն-Ալլը, որ Պետերբուրգում իր քաղաքապետութեան ժամանակ յայտնի դարձաւ ուսանողներին անաճ ջարդով յետոյ Ալիւսիի նահանգապետութեան միջոցին ենթարկեց սպանման փորձի և որն այժմ ներքին գործերի մինիստր Պլեյվէի օգնականն է: Նախագործների կողմից նրան տւած ճաշի ժամանակ, նա դժգոհութիւն յայտնեց նահանգապետին, որ թոյլ էր տւել գործադուլին մեծ չափեր ընդունել և այնքան երկար տւելը: Նահանգապետը պատասխանեց նրան իրեն արդարացնելու համար, բայց մինիստրի օգնականին այդ արդէն չէր հետաքրքրում. նա հասաւ իր նպատակին՝ յայտնելով ժողովւած դրամատէրերին, որ կառավարութիւնը եղել է և կը լինի միշտ նրանց կողմը: Նախագործները մէկը միւսի ետեւից իհարկէ շտապեցին փառաբանական ճառեր արտասանել թէ Փօն-Ալլի և թէ նահանգապետ Օդինցովի հասցէին ու ճաշը ընդհատեց նրանով, որ շամպանիայով «ծանրաբեռնւած» օգնականը սեղանից հեռացաւ հանգստանալու...

### Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

#### ՌՈՒՐԷՆ ԹԻՇՄԱՆԵԱՆ

(Քննի)

Բնիկ երզնկացի էր Քեռին: Կը պատկանէր Շիշմանեան բարեկեցիկ ընտանիքին, ու իր բուն անունն էր Ռուրէն: Ուսում առած էր Երզնկայի Ազգային Կեդրոնական վարժարանին մէջ: Կը վարէր, իր եղբոր Գրիգորի հետ, վանահայրութիւնը Սուրբ Մեծ-Ղուսաւորիչ վանքին, Սեպուհ լեռան կողքերուն վրայ կառուցւած: Յեղափոխութեան կարապետներէն եղած էր իր շրջանին մէջ, ու նախ բան հայդուկապետ դառնալը, մասնակցած էր Գալուստ Արխանեանի իրմբին: Այս վերջինին՝ իր ընկերներով ձերբակալուէն առաջ Քեռի՝ Երզնկայի կեդրոնական կօմիտէի անջակցութեամբ, կազմակերպելու ձեռնարկած էր արդէն նոր հայդուկախումբ մը, որ ահ ու սարսափ ձգեց, կոտորածներէն առաջ, հայ հարստահարող թիւրք ու քիւրդ պէյերու վրայ ու իր հովանին տարածեց, կոտորածներու պահուն, հայ գիւղերու և բնակչութիւններու վրայ, որոնք կը գանկէին Քեռիի ու Տէրսիմի սահմաններուն մէջ:

\* \* \*

Կոտորածներու իրկուրի թւականներն էին: Թիւրք բռնակալութեան կամայական խժգոնութեանց ենթարկուած Հայաստանը ահի ու սարսափի մէջ կը գալարէր: Յեղափոխական քարոզչութիւնը, նպաստաւորած Սասունի մէջ կատարուող վայրագութեանց ու օրւան դժնդակ իրականութիւնները դարձող կախաղաններու մղձաւանջէն, հայ հայդուկին սիրտը ալ աւելի կ'արիւնոտէր ու զայն վրէժխնդրութեան անսանձերի զգացումով կը բորբոքէր:



Իւրաքանչիւր վայրկեան սըրտակեղեք ու սահմակեցուցիչ անակնկալ մը կը կայծակէր Հայութեան գլխին ու մահու և կենաց տագնապը կ'ուրւականէր անոր շփոթ գոյութեան մէջ:

Երզնկա ու իր շրջակայ հայրնակ գիւղերն ևս միևնոյն ճգնաժամը կ'անցնէին: Բթառիճ գիւղին մէջ օր ցերեկով կ'առւեանգէր ու կը բռնաբարէր 15 տարեկան կոյս աղջիկ մը՝ Աշիտ պէյ կողւած ճիմիցի թիւրք սրկայէ մը, ու քաղաքին մէջ Հայոց եկեղեցիներու հրապարակին վրայ, հայ երիտասարդ մը կը սպաննէր քիւրդ փայտավաճառէ մը, ու թէ պէյ և թէ՛ քիւրդ անպատիժ կը մնային: Այս վերջին դէպքը կը պատահէր 1895 օգոստոս 12-ին (ս. ա. կիրակի օր մը): Քեռի կ'իմանայ այդ վերջին վայրագութեան լուրը ու առիթը այլևս եկած կը համարէ վրէժխնդրութեան

գաս մը տալ Երզնկայի վայրենի կառավարութեան: Իմանալով որ թիւրք գայմազամ մը Բէմախէն Երզնկա պիտի ճամբորդէ չորս զինւորի և հայ անասնաբույժի մը, Պողոս Տատեանի (Գօլ-Աղասի) ընկերակցութեամբ՝ իր 17 հոգիէ բաղկացած խմբով կը փութայ անմիջապէս Երզնկա տանող Բէմախի կիրճը կտրել, ուր յաջորդ օրը կ'երևին կառավարական այդ ճամբորդները:

Քեռի կը հրամայէ հեռուէն որ անձնատուր ըլլան. զօրքերը իրենց գործը հասարակ աւազակներու հետ կարծելով նախապէս՝ դիմադրել կը փորձեն, բայց երբ հայդուկներու փոխադարձ պատասխանը ղշափուշ՝ մը դետին կը փռէ, սուլթանի հաւատարիմ ծառաները ետ փախչելու իրենց սովորութեան կը դիմեն, ու հակառակ կողմէն ալ ճամբանին փակած գտնելով՝ անձնատուր կ'ըլլան. Հայդուկապետը կը հրամայէ կեանքերնուն չբազել. քանի որ անձնատուր եղած էին, ու կը գոհանայ միայն զէնքերնին ու խմբին հարկաւոր քանի մը գոյքեր աւնելէ վերջ՝ Սեպուհի ժայռիւրը հեռանալ:

Յաջորդ օրը Երզնկայի Գ-րդ զօրաբանակէն Եսփէր ԱՏէտ պէյը ժող 1,500 զօրքերով կը սլանայ Բէմախ, հայդուկային խումբը բռնելու կամ զայն կոտորելու: Ար պաշարէ Ս. Մեծ-Լուսաւորիչ վանքը, ինչոր կը դժուարացնէ խմբին յարաբերութիւնները վանքին հետ ու պատճառ կը դառնայ երկար օրեր անոր անօթի ու ծարաւ մնալուն: Ստիպւած՝ Քեռին կը հեռանայ իր բռնած ամուր դիրքէն, որուն մօտեցած էր արդէն՝ դաւաճաններու աւած տեղեկութիւններու շնորհիւ՝ տաճիկ բանակը: Հազիւ կը մօտենան հայդուկները մերձակայ հեղեղատին ու ջուր խմել կ'ուզեն, ահա՛ զինուորական փողերը կըսկսին հնչել ու հազարաւոր դնդակներ կը թափուին իրենց գլխին վրայ: Քեռին կ'ըմբռնէ իր խմբին գրութեան բոլոր փափկութիւնը ու կը հրամայէ դիմացի լեռը մագլցել: Վերելքը դժար էր ինքնին քաղցած ու ուժաթափ հերոսներուն համար, երբ սուր ճիչ մը անոնց ուշադրութիւնը կը հրաւիրէր ու աւելի ծանր պարտականութեան մը առջև կը դնէր զանոնք: Վիրաւորւած էր Քեռիի քոյրը, խմբին հերոսուհին ու դեռատի ծան՝ Արքը, ու «վրէժ, եղբայր» կը գոչէր: Պէտք չէր զայն բարբարոս թշնամիին գազանաբարոյ փորձակին յանձնել, պէտք էր զայն ազատել: Քեռին ետ կը դառնայ ու յանդուգն պաղարկութեամբ մը իր քրոջ կը մօտենայ, կ'առնէ զայն իր ուսերուն վրայ, կը բարձրանայ զառիվներ՝ իր ականջներուն տակէն սուլ-սուլացող գնդակներու հանած ծուխին ու փոշին մէջէն, և կը պատասպարէ ժայռի մը ետին: Այդ դիւցազնական արարքը հրաշքի մը տպաւորութեան տակ կը թողու զօրք ու զօրավար.

— Ա՛հ, եթէ այդքան քաջ զինւոր մը միայն ունենայի... կը գոչէ պինպաշին:

— Ա՛հ, եթէ այդքան քաջ պինպաշի մը միայն ունենայիր... կը գոչեն զինւորները յուսահատ, որոնք արդէն «Մահատի ձեննէթը» գլորուի սկսած էին՝ բարձրութեանց վրայ ապահով դիրքի հասած հայ հերոսներու անվրիպելի գնդակներէն:

Հայդուկային խումբը իր կռիւը հերոսաբար կը շարունակէ, նահանջող սիստէմով մը, ու կը զբաղեցնէ մինչև ամսոյն 20-ը թրքական խուպուս զօրքերը: Քեռիի հրահանգներու համաձայն՝ ընկերները խումբ-խումբ կը բաժնուին իրարմէ, զիրենք հետապնդող զօրաբանակին սպառնալիցական բոլոր հնարագիտութիւնը պարապը

հանելու նպատակաւ ու զիրար կը գտնեն անտառի մը խորը, ուր ժամայիւր եղած էին այդ եղբրական կուռոյն մէջ:

Խուճուկն կը պակսէին հինգ ընկերներ միայն, որոնցմէ երեքը ողջ բռնուած էին ու երկուքը, Արմենակ Պոյաճեան \*) ու Սեպուհ Քալայճեան, սպաննուած՝ դիւցազնական պայքարէ մը յետոյ: Իսկ բանակը կը վերադառնայ Երզնկա, 15 օր թափառելէ վերջ Սեպուհի ձորերուն մէջ, ունենալով 60 զինւորի կորուստ և 150-ի չափ վիրաւոր:

\* \* \*

Քեռիի քաջագործութիւնները շատ-շատ են: Պատմէք երկու դէպք ևս: Բ\* \* \* թիւրք գիւղին շէյխը անխղճօրէն կը հարստահարէր մերձակայ հայ ազգաբնակչութիւնները: Քեռի չի վարանիր օր-ցերեկով անոր տունը մտնել քանի մը ընկերներով վրէժխնդրութեան սպառնալով վառուած: Շէյխը բացակայ՝ տունը կը գտնէին անոր հարձը ու ծեր մայրը: Այն պահուն, երբ Քեռին կ'ուզէ աւարի տալ տունը, հարձը, որ անկատելի մնացած էր, երդիկ կը բարձրանայ ու հազար կը կանչէ: Քեռի կը պաշարի Գաշտերուն մէջ աշխատող բոլոր մշակներէն, մանգաղով ու գաւազանով զինուած, և միւսոյն ատեն 50 ձիաւոր զօրքի խմբէ մը, որ պատահամբ այդ միջոցին, գիւղէն կ'անցնէր ու կ'ուզէր պահ մը հան հանգստանալ: Քեռի դուրս կը ցատկէ տունէն ու կը հրամայէ դէպի բլուրը գտնուող կէտը բռնող բազմութեան վրայ կրակ ընել: Պաշտօնողները սարսափահար կը փախչին այդ կէտէն՝ ու կը թողուն ազատ անցք մը դէպի բլուրը Երկու-երեք ընկեր, ալ ու ձախ պաշտպանուած իրենց գիւղին մէջ գտնուած ընկերներէն, կը յաջողին բլուր հասնել ու իրենց կարգին պաշտպանել այս վերջինները՝ ալ ու ձախ գնդակահարելով բազմութեան երկու թևերը: Քեռի իր այս սպառնալիցական հնարագիտութեամբ, կը յաջողի իր ընկերներով անհետանալ, մէկ հեծելազօրք մեռած ու քանի մը պաշտօնող վիրաւոր ձգելէ վերջ:

Իրիկունը ուշ ատեն յոգնած կը մօտենայ հայ Ա\* \* \* գիւղին խմբովին, հաց ճարելու համար: Գիւղապետը սարսափահար Քեռիի ոտքը կ'իյնայ ու «օգնութիւն» կը խնդրէ: Այդ վայրկեանին, իրօք, գիւղապետին տունը իջած՝ կ'ուտէին, կը խմէին քիւրդ հաշակաւոր աւազակներ, որոնք երկար ժամանակներէ ի վեր հայ գիւղերու պատուհասները դարձած էին: Վարանելու ժամանակ չկար: Քեռի քանի մը ընկերներով կը մտնէ գիւղապետին տունը ու յանկարծակիի եկողի մը բոլոր երևոյթովը՝

\*) Արմենակ Պոյաճեան դպրոցը նոր աւարտած 18 տարեկան բարձրահասակ ու բարեկազմ երիտասարդ մըն էր: Ունէր բնաւորութիւն մը յանդուգն ու խիզախ, ինչ որ ցոյց տուած էր՝ այն բազմաթիւ կռիւներով, զորս մղած էր իր դպրոցական կեանքին մէջ՝ Երզնկայի թրքական թաղին լակոտներուն դէմ, որոնք խմբովին, յաճախ, կը յարձակէին հայ դպրոցականներուն վրայ, երբ այս վերջինները յանդուգնութիւնը կ'ուսնենային թրքական փողոցներէն անցնելու: Արմենակ Պոյաճեանի անունը սարսափեցուցած էր այդ մոնկոլական վոհմակները, որոնցմէ ոմանք ցիրուցան եղած էին չարաչար ծեծւելէ ու քթերնին-բերանին կոտորուած տեսնելէ վերջ:

Բէմախի հաշակաւոր կռիւը այդ ապագայ հերոսին մահամբ շատ ճշտող տպաւորութիւն գործեց Երզնկայի յեղափոխական շրջանին մէջ:

բրդական լեզուով կը բարևէ աւազակապետը ու անոր չորս ընկերները: Կը պարզէ անոնց իր մէկ գեղեցիկ մտադրութիւնը, խոշոր աւազակային ձեռնարկ մը, ու կը հրաւիրէ զանոնք այն իրիկուն իսկ զայն իրագործել՝ միացած ուժերով: Քիւրդ աւազակները սիրաթօթար կը համաձայնին: Գիւղապետին հարսը այդ միջոցին բարև բռնած՝ կը սպասէր քիւրդ աւազակապետներուն իրեն սահմանած եղբրական զայրկեանին, երբ Քեռի անոր ներկայութիւնը աւելորդ կը համարէ և կը թելադրէ թողուլ զայն: Իր ընկերներով ճաշելէ վերջ, Քեռի կը հեռանայ աւազակներով գիւղէն, ու փոխանակ իրագործելիք ծրագիրը առաջնորդելու՝ կ'առաջնորդէ զանոնք ձորերու մէջ:

Հրացանի հնգեակ պայթումներ պահ մը կը խզեն գիշերային լուսութիւնը... Հայաստանի լեռներն ու ձորերը կը կրկնեն այդ արգար վճիռը ու կը ձայնակցին անոր անայլայլ որուն իրաւարար ու գործադրող կը կանգնէր հայ հայրուկի հրացանը:

\* \* \*

Քեռիի քոյրը չէր միայն, որ իր եղբոր օրինակին հետեւած էր Շիշմանեան ընտանիքին մէջ: Քեռիի փոքր եղբայրը Խորէն ևս իր 15 տարեկան հասակէն յեղափոխութեան քաջ ու խիզախ զինուոր մը դարձած էր: Այն յեղափոխական քարոզչութիւնը, զոր Խորէն կ'ընէր իր դպրոցական դասընկերներու մէջ՝ անկարելի է չխշել հոս կը հաւաքէր իր շուրջը զանոնք ու պատանեկան համուզած ու պարզամիտ խանդավառութեամբ մը ոգևոր՝ դէպի բարբարոսութիւնն ու բռնակալութիւնը անոնց նողկանքն ու զգւանքը կ'արթնցնէր: Խորէն՝ Արխանեան խմբին մէջ կը փայլի ու կը զօհարեր, հակառակ Քեռիի կամքին, որ զինքը տակաւին պզտիկ կը գտնէր յեղափոխական հայրուկային գործունէութեան: Մինչ Արխանեան խումբը կը յանձնէր, Խորէն նախամեծար կը համարէր մահը քան շղթայակապ բանտը: Կը թողու քարայրը, ուր իր ընկերները կը գտնուէին չորս-հինգ օրէ ի վեր պաշարւած, կը սլանայ զօրքին ու ամբոխին վրայ ու տասնեակ զինուորներ սպաննելէ վերջ՝ վերաւոր, թշնամիին ձեռքը կ'իյնայ, որ վատաբար կը յօշոտէ ինքզինքը պաշտպանելու կարողութենէն զօրկած առիւծը:

\* \* \*

Կը թողունք որ ապագան ցոյց տայ մեծութիւնը և ճշդութիւնը այն ծրագրին, զոր Քեռի գծած էր իր յեղափոխական գործունէութեան համար, որուն հեռապատկերն էր Տէրսիմը... Ծրագիր մը, աւանդ այսօր զրկւած իր ամենէն եռանդուն գործադրիչէն:

Քեռի կը մասնակցի Գաշնակցութեան 1898-ի Ընդհանուր ժողովին: Երգնկա վերագարձին կը ձերբակալուի Տրապիզոնի մէջ, բայց քիւրդ ձեւացնելով ինքզինքը՝ կ'ազատի այդ ծանր կացութենէն:

Վերջերս, սակայն, վերստին Երգնկայի կառավարութեան ձեռքը կ'իյնայ, շնորհիւ իր եղբոր Գրիգորի, որ խաղաղիք դարձած էր Եւրֆէթ պէյ կոչւած երգնկացի զինուորականի մը ձեռքին մէջ, Զէքի փաշայի Լապէրը, ու խաբւած անոր նենգամտութենէն:

Քեռի կախաղան կը բարձրանայ 1903 յունիս 10/23-ին, երեք տարիի չափ Երգնկայի բանտին մէջ շղթայակապ տառապելէ վերջ: Բայց ինչո՞ւ այդքան յապաղում, հա-

միդական այդ նենգ վրիժառութեան գործադրութեան մէջ...

Իր կորուստը շատ դառն է Հայ Յեղափոխական Գաշնակցութեան համար: Ու այդ կորուստը աւելի խոշոր դաս մը կուգայ տալ յեղափոխութեան նւիրւած հերոսներուն, թէ երբէք պէտք չէ խաբւիլ տաճկին նենգամիտ խոստումներէն, և որոնք պիտի գիտնան թանկ ծախել իրենց արեան ամենավերջին կամիւն իսկ:

Քեռին հազիւ 38 տարեկան էր:

Թող կախաղան բարձրացնէ նենգամիտ տաճիկը. հայ հերոսը պիտի հեգնէ այդ մահը՝ համուզած թէ չպիտի ուշանայ վրէժխնդրութեան յորդածաւալ մարտի մը, որ պիտի պոռթկայ հայ յեղափոխականներու հրացաններէն, որոնք խուռներամ պիտի ուխտաւորին դէպի այն կանգուն խորանները, օժևած հայ հերոսներու տաք արևնով: Յարգանք անմահացող Հերոսին յիշատակին:

**Մ Ա Մ Ո Ւ Լ Ի Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն**

\* \* \*

Սեպտեմբերի 26-28 ին Փրանսիական Ռուան քաղաքում տեղի ունեցած Խաղաղութեան Համաժողովը՝ ընդունեց հայկական խնդրի վերաբերմամբ հետևեալ բանաձևը.

«Խաղաղութեան 13-րդ Միջազգային Համաժողովը, կրկնելով 9-րդ, 10-րդ և 11-րդ Համաժողովների յայտնած ցանկութիւնները.

Գոհութեամբ արձանագրելով այն միջոցները, որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը ձևւոր են առել 11-րդ Համաժողովի նախաձեռնութեամբ լազմացուցու հիւսիստական գործակալները Հայաստանում.

«Սակայն նկատելով որ այդ միջոցը թէպէտ և կարող է արբելել կամ ստեղծմապէս յետաձգել մեծ կոտորածները, չէ կարող այնուամենայնիւ փրկել զանցող քնաջնջումից մի ամբողջ ժողովուրդ, որ սնչադրուած է աստիճանաբար.

«Համուզւած լինելով, որ հայերի պահանջած թէֆօրմներն ու երաշխաւորութիւններն կարող են իրագործւել առանց բնաւ վնասելու Թուրքիայի ամբողջութեանը և որ նէնց իրենց, թիւրք ազգաբնակչութեան, շահը պահանջում է յարկէ բարենորոգման այդ գործին.

«Յնուակում Բերլինի դաշնադրի 61-րդ յօդուածի վրայ, որով Եւրոպան իրաւունք է ստացել և յանձնառու է եղել ապահովել հայ ազգաբնակչութեան կեանքը, կրթութեան և կրթութեան ազատութիւնը, իրենց գոյքի խաղաղ վայելումը և խղճի ազատութիւնը.

«Յայտարարում է, որ ժամանակ է՝ յանուն Եւրոպայի պատւի և մարդկութեան բարեկեցութեան, որ այդ յօդուածը ստանայ լիակատար և օրինական գործադրութիւն.

«Եւ հրաւիրում է քաղաքակրթւած կառավարութիւններին ու ժողովուրդներին՝ աշխատել անցյալ 1895 թվի մէծօրանդումի մտքով, համերաշխութեամբ վերջ դնել իրերի մի անտանելի կայութեան, որ վտանգաւոր է ընդհանուր խաղաղութեան համար.

«Ուղղում է իր շնորհաւորութիւնները՝ արկիւններ կարելի է և Մէյրիէյին, Հայաստանի օգտին նրանց արած պրօպագանդի համար, նմանապէս «Պրօ Արմէնիայ» խմբագրութեան և նրա խմբագրապետ պ. Պիէռ Քիառլին»:

\* \* \*

Հոկտեմբերի 25-ին, Պարիզում, Փրանսիական հայաստանի կոմիտէի նախաձեռնութեամբ, տեղի պիտի ունենայ միջազգային կոնֆերանս, և ը ի ն ի ի ն ի ն ի ն ի ն մ ա ս ի ն: Կոնֆերանսին պիտի մասնակցեն Փրանսիացի

անգլիացի, իտալացի, բելգիացի և հոլանդացի ակադեմիայի քաղաքական գործիչներ, իմիջի այլոց՝ Ջեյմս Բրայս, Կոնֆեդերացիոն Կոնգրեսի Կոնստան, Վրէստանսէ, Ժոնէս, Պաստի, Մակկոյ: Կոնֆեդերացիոն արծարծելը խնդիրներն են՝

1. Տեսութիւն ներկայ վիճակի (Աւստրո-ուսական նախագծի վիճումը).
2. Ֆրանս-անգլո-իտալական համերաշխ գործակցութիւն.
3. Սերտ կապ Հայաստանի և Մակեդոնիոյ խնդիրների միջև.
4. Գիւստապետութիւնը և Արևելեան խնդիրը.
5. Անմիջական մի լուծման անհրաժեշտութիւնը Արևելքում:
6. Եւրոպայի հաւաքական և անշահախնդիր գործողութիւն:
7. Զանազան առաջարկների լուծումներ և բընտուութիւն.
8. Կոնֆեդերացիոն որոշումներ ու եզրակացութիւններ:

Կոնֆեդերացիոն յետոյ տեղի կ ունենայ մեծ հրապարակական միջազգային գումարում՝ Սարա Բերնարի թատրոնում:

\*\*\*

Ռուսաց կայսրի Իտալիա այցելելու առթիւ՝ իտալական սօցիալիստ կուսակցութիւնը հրատարակեց մի կորովի մանիֆեստ, ուր կարգում ենք, ի միջի այլոց, հետևեալ հուշումները.

«Իտալական ռամկավարութիւնը, որ ամբողջում է իր բազմազան նրբութիւնների մէջ քաղաքակրթութեան բարձրագոյն իրջալը, չէ կարող անտարբեր մնալ իտալ այն ոճիրների ընդդէմ մարդկայնութեան որոնք արատաւորում են ևւրոպական քաղաքակրթութիւնը: Դեռ ևւս բոլորովին վառ ու կենդանի մի աւանդութեամբ նա ժառանգն ու պահպանողն է քաղաքական ազատութեան իրէայի ևւ սօցիալիստական արդարութեան, որի իրադրումը պիտի լինի 20-րդ դարի պատիւը: Անա թէ ինչու, համարաշխ բոլոր Եւրոպայի ռամկավարական-սարբերի հետ՝ իտալական ռամկավարականները հանդէպ հայկական ու մակեդոնական սարսախների ևւ Ֆինլանդիայի ստրկացման՝ իր բողոքն է բարձրացնում՝ պար իտալիա մանկու միջոցին՝ ընդդէմ ռուսական բռնապետութեան անամթութիւնների ու պազանութիւնների»:

Ծրագրւած այցելութիւնը տեղի չունեցաւ... Որքան էլ բուրժուական մամուլը աշխատէ մթացներ, վարաբուրել փաստերը, ոչ մի տարակոյս չը կայ, որ ցարը իտալիա չը գնաց միայն երկիւղ կրելով իտալական սօցիալիստների սպառնական դիրքից, այն ցոյցերից ու սուրբներից, որոնք սպասում էին Հուովում Ռուսաստանի վարաբ ինքնակալին: Ամենավերջին տեղեկութիւնները — քաղւած ռուսական աղբիւրներից — հաստատում են, որ ցարի անսպասելի որոշման պատճառը գլխաւորապէս այն հանգամանքն էր, որ նրա դէմ խմբաբարձ էր Հուովում մի մանիֆեստ, որ ստորագրել էին պարլամենտի ծայր-ձախակողմեան 56 անդամներ և նրանց շարքում մինիստրական կարբինտի մի տասնեակ մասնաւոր բարեկամներ:

Հուովի սօցիալիստական «Avariti» թերթը՝ «2ի գալիս և չի գալում» խորագրով մի յօդւածի մէջ յարթական կերպով յայտարարում է.

«Այսքը անմիտակցութեամբ պատմական կարեւոր նշանակութիւն ունի միջազգային քաղաքականութեան տարբերութեան մէջ... Անք հաստատում ենք, որ սիրով միա-

պետական ռէֆիսի տակ առաջին անգամը՝ պրոլետարիատը իր քաղաքական կազմակերպութեան շնորհիւ ճնշում գործ դրեց արտաքին քաղաքականութեան անցքերի վրայ... Յոյցերը հասան իրենց նպատակին...»

\*\*\*

Հեռագիրը հաղորդեց, որ Անգլիան պահանջում է իրագործել Բերլինի դաշնագրի բոլոր յօդւածները թէ մակեդոնացիների և թէ հայերի վերաբերեալ և որ այդ առաջարկին միացել է նաև իտալիան:

\*\*\*

Աւստրո-ուսական համաձայնութիւնը իր վերջին նօտայով հետևեալ պահանջները դրեց սուլթանին.

1. Մակեդոնիայի ընդհանուր վերահսկողին — որ մահմեդական է — պիտի միացնին երկու օգնականներ, մինը աւստրիացի, միւսը՝ ռուս:
2. Պիտի նշանակեն մեծ պետութիւնների կողմից ղեկւորական իրազեկ քննիչներ, որոնք պարտաւորւում են հետևել տաճկական զօրքին նրա մեծ արշաւանքների միջոցին՝ և ղեկւորների անկարգութիւնների առաջն առնել:
3. Նշանակել մի խառը յանձնաժողով՝ կազմւած բոլոր մեծ պետութիւնների ներկայացուցիչներից:
3. Աւերաշինել կործանւած եկեղեցիներն ու տըները: Հայրենիք վերագործնել բուլգար փախստականներին:

\*\*\*

Առաջ ենք բերում մի կտոր՝ կովկասում կազմակերպւած «Հայկական Ինքնապաշտպանութեան կենտրոնական կոմիտէի» օգոստոսի 31-ի պրօկլամատիօնից.

«... Թիֆլիսի դէպքը ոչ առաջինն էր և ոչ էլ վերջինն է լինելու Գաղան Գօլիցիոնը նորանոր դաւեր է սարքելու... Խոնարհութիւնն այլևս արժէք չունի, որքան խոնարհենք, այնքան մեծ է լինելու գոհերի թիւը: Հարկաւոր է դիմադրութիւն, ու ժեղ դիմադրութիւն: «Մթաւուցէ՛ք, հայեր, բաւական է ստրկի նման միշտ երկրւոյ շարժելը Թաիւած արիւնը, ընկած դահերը թո՛ղ վառեն ձեր արիութիւնը ևւ մինչև վերջ պաշտպան կանգնեցնեն ձեր ազգային պատուի ու սեփականութեան: «Եւ թո՛ղ այդ ինքնապաշտպանութիւնը աւելի անվախ, աւելի համարձակ արտայայտուի, միշտ բարձր կոչւով: Կորչի՛ բռնակալութիւնը, Կեցցէ՛ ժողովրդի ազատութիւնը»:

\*\*\*

«Իէփօլիցիօննայա Բօսսիա» ռուսական յեղափոխական թերթը՝ հրատարակելով մեր խմբագրութեան յանձնած մի քանի գօկումենտները՝ հետևեալն է գրում.

«Օգուում ենք առիթից՝ արտայայտուել ընկերական ևւ իտալիստութեան մեր դրացուները՝ Գրօշակի խմբագրութեան... Ներկայ գօկումենտները պայծառ կերպով ներկայացնում են այն անհաշտ թշնամութիւնը, որ սոյց են տալիս ժամանակակից յետադէմ կառավարութիւնները դէպի իրենց նաւած ևւ ստրկացրած ժողովուրդների պղպայի գիտակցութեան արթնացումը... Կառավարութիւնների այդ ցուլթեան արթնացումը պէտք է ընդդիմադրել սօցիալ-յեղափոխական կուսակցութիւնների դաշնակցութիւնը: — Կուսակցութիւնների, որոնք դոյութիւն ունին պատմական կեանքի համար վերածնուող ժողովուրդների մէջ: Այդ վերջին դաշնակցութիւնը կը լինի նախկարապետը ազատ ժողովուրդների ապագայ դաշնակցութեան, — սօցիալիստական ինտերնացիօնալի»:

Նոյն գօկումենտները և մի շարք մեր թղթակցու-



Թիւները կովկասեան ցոյցերի մասին՝ հրատարակեցին նաև «Օսլոբոգդներէ» Թերթում, համակրական արտասայտու թիւներով:

\* \* \*

Հայասեր ամերիկացիները կազմել են իրենց հայրենիքում մի ընկերութիւն «Friends of Armenia» (Հայաստանի բարեկամները) անունով: Նրա նպատակն է՝ Հայաստանը լաւագոյն կերպով ճանաչեցնել ամերիկացի հասարակութեան և դրա համար լուրեր ու տեղեկութիւններ տարածել հայկական խնդրի ու հայերի մասին, ամերիկեան լրագիրների միջոցով: Ընկերութիւնը կազմած է բացարձակապէս ամերիկացիներից: Նրա մեջ մտնում են ականաւոր քաղաքացիներ:

Ընկերութեան Մամուլի յանձնախումբը դիմում է բոլոր իրազեկ հայերին, ուր որ էլ գտնուին նրանք— հայոց վիճակի մասին ս տ ո յ գ տեղեկութիւններ հաղորդել իրեն:

Հասցէն՝ Alice Stone Blackwell, 45 Boutwell Avenue  
Dorchester, Mass. (U. S. A.)

### Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Ի Ի Ն

#### ԱՐԵՒԵԼԵԱՆ ԲԻՐՈՆ ստացած է՝

1903-ի ապրիլ-օգոստոսին՝ Մարշիմոնից 40. 59 ուրբի, Փարոս նալանդեանից 6. 50, Նոր Ընտ. խմբ. 19, Մարշիմոնից 144. 68, հանձ խմբ. 10, Պանդուտ չեթոնեանից 5, Ալեքսի խմբ. 10, Փարոս նալանդեանից 13, Շամիրամ խմբ. 10, Վարնանդ խմբ. 23. 80, Բաշաց խմբ. 30, Առիւծ Տարօնի 12, Նազիր Բաբայից 16, Մուրադ խմբ. 20, Փառքո Նալանդեանից 7, Մուրադ խմբ. 4, Կարմիր Աղբիւր խմբ. 26, Բաքո Ֆի խմբ. 10, Կարմիր Աղբիւր խմբ. 23. 5, Ճաթոն կովիւ. 45, Դիլիշանեանից 80. 40 ուրբի: Գումար 587 ուրբի 62 կօպէկ:

#### ԱՐԵՒՏՅԵԱՆ ԲԻՐՈՆ՝

Թ ի ւ ը թ ի ա յ ի Ե. ք.-ի Յանդուզն խմբի ամսավճարներէն՝ 1902 թ.ի մարտ, ապրիլ եւ հոկտ. 354 դահ., 1903 թ. յունվարին 337 դահ., Սարսոն խմբէն 230 դահեկան:

Լ օ յ ղ օ յ ի ց՝ Ալպին խմբից՝ (Փարցատ 10 շիլիս, Վաղինակ 2 շիլ. 6 պէնս, Իրատ 2. 6, Ասզանազ 2. 6, Անաւուտ 2, Կայ-կայ 1. 6, Պոլսեցի մը 5): Մ. Կանտորեանից 32. 70 Ֆր., Պրն. Մ. Ա-ից 1000 Ֆր., Գ ա յ ի ը ի ի ց՝ Պ. Միրզայից 25 Ֆր., Ս տ ա ը -Ջ ա -գ օ Ր ա -ի խմբից 400 Ֆր., Պ ա տ ե Ր ս ո Ն ի ց՝ 41. 20 Ֆր., Ռ-է-յ-Ֆ-է-Լ-ը-ի-ց՝ Եռլմայստերից. 12. 50 Ֆր., Գ ե Ր մ ա Ն ի ա յ ի ց՝ Պ. Թ-եանից 10 մարկ, Տիկ. Ա-եանից 12 Ֆր., Գ ա լ ա ց ի «Ժերոնի» խմբից 80 Ֆր., Ո ս կ ա Ն ա պ ա տ ի «Իրամ» խմբից 3 անգամ ուղարկած 6330 Ֆր., Փ ի ի ի ա պ է ի «Աքէ-Թ-աթուլ», «Արամեան» եւ «Աստղիկ» խմբերից Բալկանեան կեդրոնական կօմիտէի հաշ-վին՝ 50-ական Ֆր. իւրաքանչիւրից:

Ընդամենը գումար 8075 Ֆրանք 65 սանտիմ:

#### ՌՈՒՍԱՆԻԱ՝

ԴԱՆՈՒՌ ԵՆՎԿՈՎԻՄՈՆԻ ստացեր է յունար, փետրար եւ մարտ ամիսներուն Ս.-ի հետեւեալ խմբերէն՝ Կարին 33 Ֆրանք, Վարնազ 42, Սարսոն 21, Հիգուլ 36, Սերո-Աղբիւր 54, Նոր-Դար 44, Ջինսալ 33, Սեպուր 25. 80, Փէրայի 24. 30, Տըրատ 20, Գ.-ի Առիւծ խմբ. 45, Նիհար խմբ. 25: Գումար 403 Ֆրանք 10 սանտիմ:

ԴԱՆՈՒՌ ԵՆՎԿՈՎԻՄՈՆԻ ստացելու մասին եւ յունիսին հետեւեալ խմբերէն՝ Կարին 35 Ֆրանք, Սերո-Աղբիւր 35, Նոր-Դար 36, Ջինսալ 33, Վարնազ 44, Սեպուր 19. 60, Տարօն 10, Հիգուլ 63, Փէրայի 80. 30, Նիհար խմբի անդամ Ս. Գ. 5 Ֆր.: Գումար 314 Ֆրանք 80 սանտիմ:

Ընդամենը գումար 717 Ֆրանք 90 սանտիմ:

#### ԱՅԳԵՏՅԱՆԻ Կօմիտէն՝

Շոքայից № 2 անդորրագրով 200 ուրբի, Աբջոյից № 3 անդորրագրով 300 ու., Մի տիկնոջից № 4 անդորրագրով 50 ու.,

Սահակից № 5 անդորրագրով 100 ու., Ս.-ից № 6 անդորրագրով 300 ու., Հ.-ից № 7 անդորրագրով 150 ու.: Գումար 1100 ուրբի:

#### ՎԻՃԱՊՈՒՄ ստացւած է՝

Տօր 15 դահեկան, Կամր 40, Հիւրա 15, Կացոյ 7. 56, Աշոտ Երկաթ 5, համակրող 20, Սե. Մօսին 15, Թաթուլ 10: Գումար 127 դահեկան 56 փարա:

#### ԱՊԱՌԱԺԻ Կօմիտէն՝

Յունվար 1-ից մինչև մայիսի 10: Անցեալ տարւոյ մու-ցորդ 9. 60 ուրբի, «Ոյժ» խմբ. 40, «Գործակաւար» խմբ. 170, որից 87. 50-ը հանգանակած «Աւետիսի» միջոցով հետեւեալ անձ-նաւորութիւններից՝ Մ. Յ. 6 ուրբի, Գ. Ն., Ա. Մ., Դ. Դ., Դ. Ա., Տ. Կ. եւ Ն. Ա. 5-ական, Հ. Տ. Մ. 3. 50, Ս. Դ., Դ. Ա., Գ. Շ., Ա. Յ., Գ. Բ., Մ. Բ., Գ. Մ. Շ., Ա. Ղ., Հ. Ս., Հ. Ա., Բ. Ա., Գ. Ս., Դ. Փ., Ա. Մ. Փ. 2-ական, Սեցուլ խմբից 147. 68, Ոյժ խմբից 250 ուրբի: Գումար 617 ուրբի 28 կօպէկ:

#### ԿԱՐՍԻՐ ԶՐԻ ԷՆԹԿՈՒՄԻՆՆ՝

Ամսալուր ներկայացրելու մասին 15. 20 ուրբի, յունիսին 12. 80, մամուլի Ներկայացրելու մասին 8. 85, Անդրանիկ 1 խմբի յուլիսի ամսավճար 8, II խմբի յուլիսի ամսավճար 6, III խմբի յունիսի եւ յուլիսի ամսավճար 13 ու.: Ստացւած է երեկոյթի առիթով նախօրէն ծախւած տոմսակներից 20, ստացւած է № 114 Նւի-րատուութեան թերթից 58. 80, որ կազմել է հետեւեալ կերպով՝ Մի ոմս 5 ուրբի, Բազէ 1. 50, Սաթի 0. 80, Մի ոմս 2, Գե-րասիմ, Գէորգ, Մի ոմս, Արամ, Զաւէն Արիւշէնի, Մեղում, Ան-նարով, Ալեքո, Կոտա, Սաս, Յարութիւն, Վանէս, Պետրոս, Բօ, Ս. Մ. Տ., Արիիկ, Ռամ, Աստոյ տւած, Լուսինալ, Կար-պայ, Սեւ, Աւետիս, Մեղում, Մի ոմս, Ներսէս, Նիհար ոմս, Հեռոն Խրայէ, Խոսն Մազրուցեղից, Ռոմ, Ներսէսեան, Ե. Ա. Դ. 1-ական, Բարկէնի շքանից 5. 50, Դաւիթեանց 5, Ասլան 3 ու.: Գումար 137 ուրբի 65 կօպէկ:

#### ԱՅԵՐԿԱՅԻ ԿԵՐ. Կօմիտէն՝

ԼՆՆԻ Կօմիտէին ծնումը՝ Արա, Յ. Ա. եւ Պայսիքլի 36-ա-կան ուղար, Յ. Խ. 31, Գ. Խ., Պօրաք, Դ. Մ. 26-ական, Լոյս 25. 50, Պ. Պ., Կ. Ս., Հասմցոր եւ Կ. Գ. 21-ական, Մուրճ 20. 50, Յ. Ա. 20, Պ. Ա. եւ Սեւ 17-ական, Վ. Ե. 15. 50, Մեղա-ւոր 13. 50, Կ. Կ. 13, Յ. Հ. 11, Հերոս 10. 50, Ա. Կ. 6, Մ. Խ. Տ. Ա., Խ. Ա., Գ. Ս., Ս. Յ., Ն. Ժ., Ռոմ 5-ական, Յ. Գ. 5 եւ Ամեր. Սմիթ Վիսալի ընտիր ատրճանակ մը, Խ. Ա. 4, Մ. Յ., Վ. 3-ական, Տիկ. Ժ. 2. 75, Յ. Թ., Խ. Օ., Ա. Պ., Մ. Թ., Ա. Յ., Խ. Կ., Ա. Գ., Ա. Դ., Տիկ. Բ. 2-ական, Ա. Գ., Գ. Գ., Ս. Մ., 5. 42: Գումար 550 ուրբի 75 սանտիմ:

Ժողովներու անակներէ 30. 8 ուղար, «Իրօշակի» համար 6. 25, Ն. Ժ.-ի հաշիւէն 10, Սեղոք Փաշայի լուսանկարներէն 18, Ս. Պ. Պէնկոլէն 17, Վազգէն երգարանի պատկերներէն 82. 71, օրա-ցոյցներէ 51. 71: Գումար 215 ուղար 75 սանտիմ:

Ընդամենը գումար 766 ուղար 65 սանտիմ:

#### ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Է. ԱԿՆՈՒՆԻ

#### ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԵՐԿԵՐ

(ԱՌԱՋԻՆ ԷՏՈՐ)

Գիրքը բարեկամ է 368 երեսներից և պարունակում է «Կովկասեան Խաբարներ» մեծ մասը, փոփոխած և լրացւած, նաև նոր գլուխներ:

Գինն է 3 Ֆրանկ, Ռուսաստանում 1 ու. 50 կօպէկ:

Խմբագրութեանս գիմել հետեւեալ հասցեով՝  
Redaction du «Droschak», Genève (Suisse)